



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,
քո դատին է ներկայացվում «Բանբեր
Հայաստանի գրադարանների» հանդեսի յոթերորդ
համարը:

Հոդվածները ներկայացված են հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «Գրադարան. տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մշակութային ժառանգություն», «Մատենագիտություն. տեսական և գործնական խնդիրներ», «Կրթական հաստատությունների գրադարաններ», «Գրադարանային վիճակագրություն և վերլուծություն», «Թանգարանային աշխատանքի ներկայացում»:

Հավատարիմ մնալով ամսագրի որդեգրած սկզբունքներին՝ ներառել ենք մագիստրոսական 4 ավարտաճառեր՝ պաշտպանված 2018 թ. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնում: Մեր կարծիքով, սույն աշխատանքները կիրառական տեսանկյունից հետաքրքրական են և կարող են օգտագործվել գրադարաններում:

Ներկայացրել ենք Հայաստանի ազգային գրադարանում էլեկտրոնային սպասարկման մոդելը, ինչը կնպաստի գրադարանային ոլորտում էլեկտրոնային սպասարկման որակի բարձրացմանը, ինչպես նաև կրթական հաստատությունների գրադարաններին առնչվող մի շարք խնդիրներ՝ իրենց համապատասխան լուծումներով, թվային շտեմարանների ստեղծման միտումներն ու դրանց կիրառելիությունը՝ համապատասխան վիճակագրական տվյալներով: Էջմիածնի «Արարատ» ամսագրի տպագրության 150-ամյակի առթիվ անդրադարձել ենք այդ ամսագրում գրադարանային ոլորտին առնչվող հոդվածների հակիրճ ներկայացմանը: Առանձին հարթակով ընթերցողի ուշադրությանն ենք հանձնել Գրատպության թանգարանի մեկամյա գործունեության արդյունքները:

«Հաղորդումներ» բաժնում ներկայացրել ենք Հայաստանի ազգային գրադարանի 2018 թ. հրատարակությունները: «Հայ գիրքը 1931-1940 թթ.» մատենագիտության 2 հատորը լրացնում է նախորդ հինգ հատորների շարքը՝ ընդլայնելով հայ գրքի պատմության ուսումնասիրման ժամանակագրական սահմանները: Գիրքը ստեղծվել է որպես նախորդ հատորների տրամաբանական շարունակություն՝ կազմման սկզբունքներին և չափորոշիչներին համապատասխան: Ներառվել են 1931-1940 թթ. աշխարհի տարբեր

ծայրերում տպագրված հայերեն, հայատառ թուրքերեն, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը՝ 9781 անուն: Այն Ազգային գրադարանի մատենագետների հետևողական, պրպտուն աշխատանքի, ամենօրյա որոնումների և եզրահանգումների պտուղն է:

«Նորահայտ գրքեր և պարբերականներ» գրքի Ա. պրակն իր տեսակի մեջ եզակի է և նախադեպը չունեցող: Մինչ այժմ կազմված հայ գրքի և հայ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերի հիմնական նպատակը եղել է առավել ամբողջական ներկայացնել հայ տպագրության համապատասխան շրջանի պատկերը: Չնայած կատարված մանրակրկիտ աշխատանքին՝ մատենագիտական համահավաք ցանկերից տարբեր պատճառներով դուրս են մնացել հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքեր ու պարբերականներ, որոնք էլ կազմել են ներկա հրատարակության բովանդակությունը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ աշխարհի տարբեր գրադարաններում պահպանվում են մինչև 1850 թ. տպագրված բազմաթիվ օտարալեզու գրքեր, որոնք պարունակում են հայերեն Տերունական աղոթքը, այբուբենը՝ լատինատառ տառադարձումով, հայերեն բառեր կամ նախադասություններ: Կատարված աշխատանքը ցույց է տալիս, որ հայ գրքի ու մամուլի տպագրության պատմության մեջ կան բազմաթիվ անհայտ կողմեր, որոնց ուսումնասիրությունը նոր մատենագիտական ցանկերի հիմք կարող է հանդիսանալ:

Տնտեսական մշակութաբան, հրապարակախոս Խաչատուր Դադայանի ջանքերով և Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի խմբագրությամբ տպագրված «Շիրվանզադե. հուշապատկերներ» գիրքը նվիրված է հայ գրող, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 160-ամյակին: Այն Շիրվանզադեի հուշագրությունն է ժամանակի գրական և մշակութային ազդեցիկ գործիչների մասին:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ


Բանալի բառեր՝ Գրադարանային ծառայությունների շրջանառություն, թվային տեխնոլոգիաներ:

Keywords. Library services circulation, digital technologies.

Ներկայիս զարգացման փուլում գրադարանները տեղեկատվությունը կարող են տրամադրել ոչ միայն ավանդական տպագիր եղանակով, այլև թվային տարբերակով: Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը թույլ են տալիս ավելի հուսալի և սեղմ կերպով պահելու տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև ավելի արագ ձևավորել և տարածել այն¹: Սույն հոդվածում Ազգային գրադարանի օրինակով կներկայացնենք թվային գրադարանին առնչվող գրադարանավարի աշխատանքը, առցանց պատվերների ընդունման և էլեկտրոնային սպասարկման հնարավորությունները, ինչպես նաև ընթերցողներին տրված հնարավորությունները: Հուսանք, որ ներկայացվող մոդելը օրինակ կծառայի այլ գրադարաններում ևս նման ծառայությունների ներդրման համար:

Ազգային գրադարանը 2011 թվականից սկսած իրականացնում է իր հավաքածուներում առկա հայերեն և հայատառ հատվածներ պարունակող գրքերի, պարբերականների թվայնացման և դրանք համացանցում հասանելի դարձնելու աշխատանքները:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Զարգարյան Ս. Թվային գրադարանի ստեղծման ներկա վիճակը Հայաստանում. ձեռքբերումներ, ապագայի զարգացումներ, Գիտության աշխարհում, 2008, թ. 1.- էջ 30-37; Թղթային Նյութի թվայնացման առանձնահատկությունները. ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում իրականացվող աշխատանքների հիման վրա, Գիտության աշխարհում, 2011, թ. 1, էջ 21-27:



Նկարում պատկերված է գրքի թղթային տարբերակից դրա թվային համարժեքի անցման գործընթացը, մինչև ընթերցողի սեղանին հայտնվելը:

Թղթային նյութերի թվայնացման առաջին քայլը դրա բնօրինակի սքանավորումը կամ նկարահանումն է, ապա ստացված պատկերների հիշելը թվային արխիվային նյութերի համար նախագծված ձևաչափերից որևէ մեկով, և վերջում, այդ նյութերը հասանելի դարձնելն է համացանցում, որի համար անհրաժեշտ է կատարել այդ նյութերի մատենագիտական նկարագրություն միջազգայնորեն ընդունված ստանդարտներից որևէ մեկով:

Թվային գրադարանը տեղեկատվական յուրահատուկ համակարգ է, որը ներառում է թվայնացված փաստաթղթերի կազմակերպված հավաքածու և ծրագրատեխնիկական ապահովման համալիր, որի միջոցով իրականացվում է թվայնացված հավաքածուի պահպանությունը և նրա հասանելիությունը հանրությանը:

Օգտվողին հասանելի միջերեսը /ծրագրային-տեխնոլոգիական համալիր/ (էլեկտրոնային գրացուցակ) թվային գրադարանների հիմնական բաղադրիչներից է և Ազգային գրադարանում իրականացվում է «Կոհա» ծրագրի միջոցով: «Կոհա»-ն բաց կոդերով ծրագիր է, որն ունի հետևյալ հնարավորությունները.

- Գրադարանի գրացուցակի էլեկտրոնային տարբերակի հասանելիություն ամենուր:

- Որոնման արդյունքում ստացված լիարժեք տեղեկատվություն:

- Որոնման ավելի լայն հնարավորություն:

- Ըստ գույքահամարի՝ գրքի գտնվելու վայրի վերաբերյալ արագ տեղեկատվություն:

- Գրադարանում տվյալ գրքի օրինակների քանակի արագ ու ճշգրիտ որոշում:

- Առանց գրադարան այցելելու գիրք պատվիրելու հնարավորություն:

Այլևս ընթերցողը կարիք չունի գալ գրադարան՝ քարտարաններում իրեն անհրաժեշտ գիրքը որոնելու և պատվիրելու համար: Նա այդ ամենը կարող է կատարել իր համակարգչից գրադարանային գործընթացների ավտոմատացման

ծրագրի միջոցով, այնուհետև այցելել այն ընթերցասրահ, ուր գրանցված է, ներկայացնել ընթերցողական տոմսը և ստանալ գիրքը:


Հայաստանի ազգային գրադարանում էլեկտրոնային սպասարկման և առցանց պատվերների համար ընթերցողին տրվում է ընթերցողական էլեկտրոնային քարտ: Յուրաքանչյուր ընթերցող ունենում է իր գրանցաբառը ու գաղտնաբառը: Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային գրացուցակի կայքէջ <http://www.armunicat.nla.am/> մուտք գործելուց հետո ընթերցողը լրացնում է իր գրանցաբառը ու գաղտնաբառը, որից հետո մուտք է գործում իր անձնական տիրույթ: Այստեղ կարող է փոփոխել կամ թարմացնել անձնական տվյալները, փոխել գաղտնաբառը, տեսնել փնտրման և ընթերցման պատմությունը, պահումների ցուցակը, ստեղծել սեփական գրականության ցուցակ, գրադարանում գրքի բացակայության դեպքում կատարել գնման առաջարկ: Համահավաք գրացուցակում ընթերցողը անհրաժեշտ գրականությունը կարող է որոնել ըստ գրադարանի քարտարանի, վերնագրի, հեղինակի, առարկայի, ISBN-ի, մատենաշարի, դասիչի:

Որոնումը կատարում եք ըստ գրադարանի քարտարանի, վերնագրի, հեղինակի, առարկայի, ISBN-ի, մատենաշարի, դասիչի

ի է սեղմել «Դնել պահում» հղումը:

Այնուհետև սեղմում եք

Որից հետո բացվում է պատուհան, որտեղ անհրաժեշտ է նշել գրադարանի անունը: Այնուհետև սեղմել «Ցույց տուր ավելի հնարավորություններ» հրամանը, որը պարտադիր է հատորային գրքերի դեպքում, իսկ հետո՝ «Հաստատիր պահում» կոճակը:



Այս քայլերը հերթականությամբ կատարելուց հետո ընթերցողի կողմից գիրքը կարելի է համարել պատվիրված:

«Կոհա» ծրագիրը հնարավորություն է տալիս իրականացնել՝

- **Սպասարկման, գրադարանային ֆոնդի, ընթերցողների քանակի, գրականության շրջանառության մասին ստույգ հաշվետվություն:** «Կոհա»-ի տվյալները պահվում են MySQL շտեմարանում, ինչը հնարավորություն է տալիս գեներացնել ցանկացած հաշվետվություն՝ օգտագործելով ուղեցույցով հաշվետվությունների ձևաչափը կամ գրելով սեփական SQL² հարցումը:

- **Ընթերցողի մասին տեղեկատվության մատչելիություն:**
- **Գրադարանային հավաքածուների վերաբերյալ տեղեկատվության ստուգում** (ընթերցողն ինքնուրույն կարող է տեղեկատվություն ստանալ գրադարանից վերցրած գրականության վերաբերյալ):


² SQL՝ հարցման կառուցվածքային լեզու (Structured Query Language):

- Գրականության մասին տեղեկատվության պահպանում (ընթերցողն իր որոնած գրականության մասին տեղեկատվությունը կարող է պահել էլեկտրոնային գրացուցակում):

- Հանրային օգտագործման քարտարանում (ՀՕԱՔ) գրադարանային նորությունների, հետաքրքիր իրադարձությունների մասին տեղեկատվություն տեղադրում:

ՀՕԱՔ-ում փոփոխություններ կարելի է կատարել հետևյալ հատվածներում՝

1. ճակատային հատված
2. հիմնական հատված
3. ձախ և աջ եզրագծեր/ նավարկության բար
4. ստորին հատված



Ներկայացնենք այս փոփոխությունները առանձին: Գրադարանի անվան ավելացում բրաուզերների վերնագրի տողում:

Administration > Global System Preferences > LibraryName

Preference	Value
LibraryName (modified)	Show ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ as the name of the library on the OPAC.
Save all OPAC preferences Cancel	

Կտեսնենք հետևյալ փոփոխությունը՝




Գրաֆիկական պատկերների և տեքստային ներդիրների, ինտերֆեյսի հիմնական գույնի փոփոխություն ՀՕԱՔ-ի ճակատային հատվածում:

Administration > Global System Preferences > opac > opacheader տիրույթում Html լեզվով գրված է փոքրիկ ծրագիր, որի օգնությամբ էլ ստանում ենք ՀՕԱԲ-ի ճակատային հատվածում նկարի և ինտերֆեյսի հիմնական գույնի փոփոխություն:

Preference	
opacheader (modified)	Include the following HTML in the header of all pages in the OPAC: <pre><!DOCTYPE html> <html> <body style="background-color:peachpuff;"> </body> </html></pre> Click to collapse
Save all OPAC preferences Cancel	

Կատարված փոփոխությունից հետո կունենանք հետևյալ տեսքը.




Ձախ եզրագիծ / նավարկության բար հատվածում հղումների տեղադրում:

Administration > Global System Preferences > OpacNav տիրույթում Html լեզվով գրված է փոքրիկ ծրագիր:

OpacNav	Show the following HTML on the left hand column of the main page and patron account on the OPAC (generally navigation links): <pre>Հայ մանուկ</pre>
---------	--

Արդյունքը հետևյալն է՝



Աջ եզրագծում հղումների տեղադրում: ՀՕԱԲ-ի աջ եզրագծում թուփ տասնյակի տեղադրում՝


Administration > Global System Preferences > OpacNavRight

Ստորին հատվածում հղումների տեղադրում:


Administration > Global System Preferences > opaccredits տիրույթում Html լեգվով գրված է փոքրիկ ծրագիր:

Preference	
opaccredits (modified)	Include the following HTML in the footer of all pages in the OPAC: <pre><div style=" margin-top:10px; margin-bottom:2px; text-align:center;font-size:10px; font-style:bold;"> <p align="center"><div>Հայաստանի ազգային գրադարան
ՀՀ, 0009,Երևան, Տերյան 72
 Հետադարձ կապ</p> </div></pre>


ՀՕԱԲ-ում կարտածվի հետևյալ պատկերը՝



ՀՕԱԲ-ի հիմնական կամ դիմային հատվածում տեքստի տեղադրում՝
Administration > Global System Preferences > OpacMainUserBlock
 Արդյունքը հետևյալն է՝



Արդյունքը հետևյալն է՝



Գրադարանային մարքեթինգի տեսանկյունից շատ կարևոր է Կոհա ծրագիրը կապել սոցցանցերի հետ: Ընթերցողը էլեկտրոնային պատվեր կատարելուց բացի, կցանկանա նաև իր նախընտրած գիրքը տարածել սոցցանցերում, ինչը գովազդի յուրահատուկ ձև կհանդիսանա գրադարանի համար: Կապը սոցցանցերի հետ


ապահովվելու համար համակարգերի գրադարանավարի կողմից անհրաժեշտ է կատարել հետևյալ կարգաբերումը՝

Administration > Global System Preferences > opac > SocialNetworks

Կարգաբերումից հետո կունենաք հետևյալ արդյունքը՝



Իր նախընտրած գիրքը գտնելուց հետո ընթերցողը անմիջապես ՀՕԱԲ-ից կարող է տարածել վերևում նշված սոցկայքերի միջոցով:



Էլեկտրոնային առցանց պատվերը գործում է Ազգային գրադարանում 2017 թ. նոյեմբերից: Աշխատանքները ընթանում են իրենց հունով և մինչ օրս պատվիրման հետ կապված դիտողություններ չեն արձանագրվել: Սակայն գործընթացը կրում է շարունակական բնույթ և ունի զարգացման հեռանկարներ: Կարծում ենք՝ հետևյալ առաջարկները կնպաստեն ծրագրի հնարավորությունների զարգացմանը:

- Համահավաք գրացուցակում ընթերցողի հետադարձ կապի ապահովում հաղորդագրության միջոցով: Այն կարող է իրականացվել հետևյալ կերպ՝ գրադարանավարը պետք է մուտք գործի ընթերցողների տիրույթ, գտնի այն ընթերցողին, որին ցանկանում է հաղորդագրություն ուղարկել՝ **Home > Patrons > Patron details for NLAANI_555 (145145)** քայլերի միջոցով: Ընթերցողի էջը բացելուց հետո մուտք գործի «Ավելացրու հաղորդագրություն» տիրույթը:

NLAANI_555 (145145)

Առաջնային էլ փոստ: ani88mkrtchyan@mail.ru

Խմբագրել

Հրացուցիչ բաղկացուցիչներ և բնութագրիչներ

Խմբագրել

Հնթերցողի հաղորդագրություններ ուղարկելու նախապատվություններ

	Օրերը նախադես	էլ փոստ	Միայն դայքեսներ
Նյութը ենթակա է վերադարձի	-	☐	☐
Խորացված նշում	0 ▼	☐	☐
Պահումը լրացվեց	-	☐	-
Նյութը հետ ընդունվեց	-	☐	-
Նյութը դուրս տրվեց	-	☐	-

Գրադարանից օգտվողի համար: Borrowernumber:

Դաս:

Գրանցման ամսաթիվ:

Լրանալու ամսաթիվ:

Գրադարան:

Ցույց տուր դուրս տրվածները

Երաժիշտություն

Օգտվողի անուն:

Գաղտնաբառ:

Խմբագրել

Այլընտրանքային

Բացված պատուհանում լրացնի այն հաղորդագրությունը, որն ցանկանում է ուղարկել և պարտադիր նշի ուղղությունը՝ համահավաք գրացուցակ:

Leave a message

Add a message for: OPAC - NLAANI_555 ▼

Predefined notes: Select note ▼

Հարգելի Անի Ձեր պատվերը կատարված է:

Save Cancel

Պահպանելուց հետո ուղարկված հաղորդագրությունը ընթերցողը կտեսնի համահավաք գրացուցակի իր անձնական էջում:

Messages for you

- Հարգելի Անի Ձեր պատվերը կատարված է:
Written on 14/11/2018 by National Library of Armenia


Hello, NLAANI_555

[Click here if you're not NLAANI_555](#)

Checked out (0) Holds (12)

You have nothing checked out

- Հարց գրադարանավարին՝ ընթերցողը կարող է իր հուզող հարցերի պատասխանը ստանալ գրադարանավարի կողմից: Այն կարող է ունենալ հետևյալ տեսքը



և կարող է իրականացվել հետևյալ կերպ՝ Home > Administration > System preferences> opaccredits տիրույթում անհրաժեշտ է կապել համահավաք գրացուցակը (Opac) Facebook Messenger հավելվածի հետ, որպեսզի իրականացվի հաղորդագրությունների փոխանակում:

Էլեկտրոնային սպասարկումը հնարավորությունը տալիս տնտեսել ընթերցողների ժամանակը և ավելի արդյունավետ, տեսանելի դարձնել գրադարանավարների աշխատանքը:

SUMMARY

In this article, we will present the librarian's work related to the digital libraries, circulation and various electronic services - as the opportunities given to patrons. Circulation in the National Library of Armenia is implemented through the free/open source software product named Koha. In the library catalog, the reader can search for the necessary literature by library card, title, author, subject, ISBN, series, or keywords. The reader can online order the book from anywhere and at any time, later visit the library and get the book.

**ԹՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՑՈՒՑԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ
(Վ. Բրյուսովի անվան ԵՊՀ գրադարան)**

Բանալի բառեր՝ բուհական գրադարան, ԵՊՀ գրադարան, KOHA, էլեկտրոնային գրա-
ցուցակ, գիտական հոդվածներ, ԵՊՀ Բանբեր:

Keywords. Academic library, Brusov YSULS Library, KOHA, electronic catalogue, research
papers, Brusov YSULS Bulletin.

Այսօր գիտելիքներն ու տեղեկատվությունը հասարակության զարգացման
կարևորագույն գործոններ են: Տեղեկությունը օպերատիվ կերպով գտնելու, այն
գնահատելու և իր շահերին ծառայեցնելու կարողությունը յուրաքանչյուր մարդու
համար դառնում է անհրաժեշտություն: Նոր հասարակության գլխավոր արժեքը
դառնում է ոչ թե ինքնին տեղեկությունը, այլ դրանից օգտվելու հմտությունը: Աշ-
խարհի առաջադեմ գրադարանները գործադրում են բոլոր հնարավոր և անհնարին
թվացող ջանքերը էլեկտրոնային պաշարներ ձեռք բերելու, սեփական թվային
պաշարներ ստեղծելու և դրանց հասանելիությունը ապահովելու համար:

Թվային գրադարանների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում
ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ հրատարակու-
թյուններ պարունակող գիտակրթական թեմատիկա ունեցող գրադարանները:
Էլեկտրոնային հրատարակությունների օգտագործումը բարձրագույն ուսումնական
հաստատություններում դարձել է անխուսափելի և պարտադիր: Այս փաստը վկա-
յում է նոր սերնդի հետաքրքրությունը տեղեկատվության ներկայացման էլեկտրոնա-
յին ձևի նկատմամբ: Ավելանում են հանրամատչելի¹ էլեկտրոնային գիտական
գրադարանները: Գրադարանային պաշարների և ծառայությունների թվային ձևա-
չափի առաջացումն ու զարգացումը միակողմանի երևույթ չէ: Այն իր հետ բերեց նոր
մարտահրավերներ, որոնց հաղթահարումը դեռ առջևում է: Ներկայումս էլեկտրո-
նային ձևաչափը թույլ է տալիս տեղեկատվությունը պահպանել ավելի հուսալի,
զբաղեցնելով քիչ տարածք՝ սփռել ավելի արագ ու ավելի լայնորեն:

¹ Open Access

Գրադարանները այդ նյութերը մատչելի դարձնելու կենսական անհրաժեշտություն ունեն։ Պաշարների մատչելիության ավանդական եղանակը առցանց գրացուցակն է։ Թե ինչպես ներառել էլեկտրոնային պաշարները, ինչպիսիք են՝ կայքերը, տվյալների շտեմարանները, էլեկտրոնային ամսագրերը և թվային նյութերը էլեկտրոնային գրացուցակում նոր գրադարանի ապագայի ձևավորման ամենակարևոր խնդիրներից են։ Ապագայի գրացուցակը պետք է որդեգրի նոր նպատակ. ապահովել տեղեկատվության համակարգային հասանելիություն՝ անկախ ձևաչափից։

Էլեկտրոնային պաշարների ինտեգրումը պահանջում է ավելի մեծ համագործակցություն գրադարանի աշխատակիցների միջև, բայց արդյունքները արդարացնում են բոլոր ջանքերը։ Գրադարանի գլխավոր նպատակն է հասնել այն կետին, երբ կարողանանք ընթերցողներին ապահովել դեպի տեղեկատվություն տանող մեկ մուտք։ Թվայնացման նախագիծ իրականացնող գրադարանի թվայնացված նյութերի մատչելիության ապահովման համար այն կարող է լինել միակ լուծումը։

Մոտ ապագայում պետք է ակնկալենք մի հիբրիդ, որը գրացուցակի առանձնահատկություններից որոշները ներառելով հանդերձ, կունենա տեղեկությունների որոնման ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնող ավելի բարդ տեխնոլոգիական ենթակառուցվածք։ Այս տեղեկատվության կառավարման գործիքը սկիզբ կառնի գրացուցակից՝ զարգանալով մինչև պորտալ։ Պորտալը կներկայանա որպես մի «ընդհանուր նախամուտք»՝ կայք, որը գործում է որպես մի շարք այլ կայքերի ընդհանուր նախամուտք։² Գրադարանի կարիքներից կախված՝ կստեղծվի գրացուցակում ինտեգրված մի հիբրիդ, որը կարող է լինել էլեկտրոնային պաշարների «onestop access»/«մեկ պատուհան» մատչելիության ապահովման լավագույն եղանակը։

Բարձրագույն կրթության ոլորտին պատկանող գրադարանները օգտվողներին հնարավորություն են տալիս տեղեկատվությունը գտնել բոլոր ձևաչափերով, տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման և գիտելիքների կազմակերպման միջոցով։³ Գրադարանները ապահովում են հավաքածուների հանրամատչելիությունը, որոնք բավարար են իրենց որակով, բազմազանությամբ, ձևաչափով և աջակցում են հաստատության հետազոտական և ուսուցողական առաքելություններին։

² Thomas S.E. The Catalog as Portal to the Internet. Library of Congress. Bicentennial Conference on Bibliographic Control for the New Millennium, 2000, available at:

https://www.loc.gov/catdir/bibcontrol/thomas_paper.html, 21.11.2018.

³ ACRL Standards for Libraries in Higher Education, 2011, p. 9.

http://www.ala.org/acrl/sites/ala.org/acrl/files/content/standards/standards_libraries_.pdf, 21.11.2018.

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ) գրադարանում այս ուղղությամբ զգալի աշխատանք է տարվել: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը կրթության բնագավառում հսկայական առաջընթաց ու փոփոխություններ բերեց համալսարանի կյանքում: Այսօր գրադարանի համար գերխնդիր է դարձել տեղեկատվության պահպանման ու հասանելիության ավանդական թղթային եղանակի փոխարինումը էլեկտրոնային: Այս ծավալուն գործընթացի շրջանակում, հետևելով զարգացող գրադարանների օրինակին, ԵՊԼՀ գրադարանն էլ իրականացրեց էլեկտրոնային գրացուցակում թվային նյութերի հասանելիությունն ապահովելու աշխատանքներ /գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման KOHA համակարգ/:

Ստորև մանրամասն ներկայացված է թվային նյութերի հասանելիությունը էլեկտրոնային գրացուցակի միջոցով /KOHA համակարգի օրինակի հիման վրա/, Հայաստանում ԵՊԼՀ գրադարանի իրականացրած աշխատանքներն այդ ուղղությամբ, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ» /NN 2(29), 2(31), 2(33), 2(35), 2(41)/ գիտական հոդվածների ժողովածուների էլեկտրոնային հավաքածուների ստեղծման առանձնահատկությունները:

KOHA համակարգում մուտքագրումն իրականացնելու համար հիմնականում աշխատել ենք հետևյալ նկարագրման խմբերում՝ 00X խումբ (վերահսկիչ դաշտեր - 007 – Ֆիզիկական նկարագրության սևեռված դաշտ, 008 – Սևեռված երկարությամբ տվյալների դաշտեր), 0XX խումբ (թվեր և կոդեր - 022 – ISSN համար, 040 – Քարտագրման աղբյուր, 041 – Լեզու), 2XX խումբ (Վերնագրեր և հրատարակչական տվյալներ - 20X-24X, Վերնագրային տվյալներ՝ 245 – Վերնագիր և պատասխանատու, 260 – Հրատարակիչ և այլն), 3XX խումբ (Ֆիզիկական նկարագրիչներ - տպագրման հաճախականությունը, պարբերական հրատարակությունների համար), 5XX խումբ (Ծանոթություններ - 504 – Մատենագիտական ծանոթություն), 6XX խումբ (Խորագրեր - 650 – Առարկա ավելացված կետ - թեմատիկ եզրույթ), 7XX և 8XX լրացուցիչ մուտքեր (700 – Ավելացված մուտք – անձնանուն, 710 – Ավելացված մուտք – համատեղ մարմին), 9XX (Տեղային օգտագործման համար):

Կատարվել է մանրակրկիտ աշխատանք «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ» գիտական հոդվածների ժողովածուի հոդվածների, որպես առանձին թվային նիշքերի տեսքի բերելու գործում: Օգտագործվել են Adobe Acrobat Pro-ի հետևյալ հրամանները՝ Edit → Edit Text & Images → Pages → Extract → Combine files in Acrobat: Adobe Acrobat Pro-ի թողարկումից հետո ձևավորվել է

պատուհան, որի տարածքում կազմակերպվել է համագործակցությունը ծրագրի հետ: Ստորև բերված պատուհանի բաղկացուցիչներից միայն մի մասն են օգտագործվել: Հրամանների օգնությամբ կատարվել են համապատասխան փոփոխությունները:

Այնուհետև հոդվածները պահպանվել են գրադարանի ամպային տիրույթում, որտեղից հաջորդ քայլով ստացել ենք հասանելի հղումները (նկ. 7, 8, 9, 10).

Թվային նյութերի հասանելիությունը էլեկտրոնային գրացուցակի միջոցով ապահովելու համար աշխատել ենք KOHA համակարգում ներկայացված 8XX նկարագրման խմբի հետ, ավելի կոնկրետ իրականացվել է մուտքագրում 856 էլեկտրոնային տեղաբաշխում և հասանելիություն դաշտում «u» և «y» ենթադաշտերում:

Ստորև ներկայացված են 8XX նկարագրման խմբում (մատենաշարի ավելացված կետեր) կատարված քայլերը.

- Քայլ 1. 8XX նկարագրման խումբ;
- Քայլ 2. 856 էլեկտրոնային տեղաբաշխում/հասցե և հասանելիություն (ELECTRONIC LOCATION AND ACCESS);
- Քայլ 3. «u» և «y» ենթադաշտերը (Uniform Resource Identifier, Link text):


Թվային նյութի հասանելիությունը ապահովելու համար Koha համակարգի 856 դաշտում լրացվել են «u» և «y» ենթադաշտերը (Uniform Resource Identifier, Link text): «u» ենթադաշտում տեղադրվել է թվային նյութի Link-ը, իսկ «y» ենթադաշտում հղումի անվանումը (նկ. 1):

The screenshot shows the Koha 856 field editor. The 'u' field contains the URL: <https://drive.google.com/file/d/1z8IDB4D5SnSH8Stgx5hu9K9Yz4qrf>. The 'y' field contains the text: Օնլայն, Լիկիթ. Below these fields, there are four checkboxes for adding local series entries: 896 ? [] - LOCAL SERIES ADDED ENTRY--PERSONAL NAME (RLIN), 897 ? [] - LOCAL SERIES ADDED ENTRY--CORPORATE NAME (RLIN), 898 ? [] - LOCAL SERIES ADDED ENTRY--MEETING NAME (RLIN), and 899 ? [] - LOCAL SERIES ADDED ENTRY--UNIFORM TITLE (RLIN).

Նկ. 1

«u» և «y» ենթադաշտեր


Արդյունքում «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ» գիտական հոդվածների «Էլեկտրոնային տեղաբաշխում» և «հասանելիություն» դաշտը կպարունակի էլեկտրոնային պաշարների որոնման և հասանելիության համար անհրաժեշտ տեղեկություն: Գրադարանի տիրույթում պահպանված հոդվածները հասանելի հղումների օգնությամբ կապված են ԵՊԼՀ գրադարանի էլեկտրոնային գրացուցակի հետ, որով գրադարանից օգտվողների համար ապահովվում է թվային նյութերի հասանելիությունը (նկ. 2).



Նկ. 2

Հոդվածների հասանելի հղումներ


ԵՊԼՀ էլեկտրոնային գրացուցակում «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ» գիտական ժողովածուի հոդվածները հասանելի են <http://koha.brusov.am/cgi-bin/koha/opac-search.pl?q=BANBER> հղումով, իսկ նկարագրությունը ունի հետևյալ տեսքը (նկ. 3).



Նկ. 3

ԵՊՀ Հեկկորոնային գրացուցակ – Բանբեր 2(31)

Մատենագիտական գրառմանը կցված կլինի «Առցանց պաշարներ»/Online resources դաշտը, որտեղ յուրաքանչյուր հոդված որոնելի է առանձին հեղինակի անվամբ: Սեղմելով համապատասխան հղումը՝ հասանելի կլինի նյութի թվային տարբերակը: Այս դեպքում թվային նյութի հասանելիությունը ապահովված է երկու տարբերակով. ընթերցողը կարող է օգտվել առցանց կամ ներբեռնել իր իսկ համակարգիչ (նկ. 4):




Նկ. 4

Առցանց պաշարներ

Բոլոր այս թվային նյութերը հասանելի են հանրությանը գրադարանի կայք էջից, որոնք նախապես զետեղված են KOHA համակարգում հավաքածուի սկզբունքով Collection code դաշտում և գեներացված են մեկ հղման տակ (նկ. 5):⁴

⁴ <http://koha.brusov.am/cgi-bin/koha/opac-search.pl?q=BANBER>



Նկ. 5

Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ

«Բանբեր» հավաքածուի աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նոր հրատարակված արկանների հետ մեկտեղ կատարվում է նախորդ տարիների արկանների թվայնացումը համապատասխան ձևաչափերով, որոնցով նախատեսված է համալրել վերոնշյալ հավաքածուն, ինչպես նաև ստեղծել նոր հավաքածուներ՝ համալսարանի գիտական արտադրանքը հանրամատչելի դարձնելու նպատակով: Կատարված աշխատանքը հիմնավորում է նմանատիպ հավաքածուների ստեղծման անհրաժեշտությունը և կիրառման օգտավետությունը գիտակրթական համալիրների համար: Թվային նյութերի հասանելիությունը գրացուցակի միջոցով ապահովելու համար ԵՊՀՀ գրադարանի մշակված և փորձարկված մեթոդաբանությունը ապագայում կարող է նաև կիրառվել համալսարանական պահուցների ստեղծման և դրանց հանրամատչելիության ապահովման գործընթացում:

Իհարկե, ոլորտի մարտահրավերները ենթադրում են ավելի մանրամասն ուսումնասիրություն, որպեսզի դրանք լուծվեն զարգացման համապատասխան փուլում, համապատասխան տեխնիկական առկայության և անձնակազմի փորձի և հմտությունների միջոցով:

SUMMARY

The paper introduces the detailed description of the access model to the digital materials through the electronic catalog (based on the KOHA system) developed by YSULS Library as the digital collections of scientific articles of Brusov YSULS Bulletin.

«ԱՐԱՐԱՏ»-Ը ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Ամսագիր, գրադարան, գրադարանապետ, դպրոց, բաժանորդ:

Keywords. Magazine, library, librarian, school, user.

Հայ մամուլի 225-ամյա պատմության մեջ «Արարատ» հանդեսը բացառիկ տեղ է գրավում իր բազմավեկտոր գործունեությամբ: Այն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական առաջին հրատարակությունն է, Արևելյան Հայաստանի առաջին հանդեսը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո /1828 թ./ նշանակալի փոփոխություններ են կատարվում Հայաստանի կրթական և մշակութային կյանքում: Երևանում բացվում է գավառական գիմնազիա և գրադարան¹, վերջինիս ֆոնդերը իրապես զարգացան ու հարստացան Խաչատուր Աբովյանի տեսչության տարիներին: Այդ ուսումնարանի գրադարանի հավաքածուն է համարվում է Հայաստանի ազգային գրադարանի հիմքը: Առհասարակ, Հայոց պատմության էջերում քիչ չեն անհատները, որոնց կյանքն ու գործունեությունը նախանձելի նվիրումի և հանձնառության օրինակներ են եղել ի նպաստ ազգային պատմության, գրականության, մշակույթի զարգացման, առաջընթացի: Այդպիսին է Գևորգ 4-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նա կառուցողական աշխատանքներ է տանում ոչ միայն եկեղեցու շահերի ու գույքերի պահպանության, վանական կյանքի, կրթական-ուսումնական խնդիրների բարեկարգության ուղղությամբ: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Մատենադարանի հավաքածուին, որն այդ ժամանակ արդեն 2300 միավորից ավելի ձեռագիր մատյան ուներ, իսկ առանձին թեմերին, եկեղեցական հայրերին նրա ուղղած շրջաբերական-կոնդակների արդյունքում նոր արժեքավոր ձեռագրերով է հարստանում: Բացի դրանից՝ Կաթողիկոսը իր անձնական 331 թանկարժեք ու հազվագյուտ ձեռագրերը ավանդում է Մատենադարանին. հենց դրանք են դառնում հայտնի Գևորգյան հավաքածուի հիմքը²: Նա եռանդուն աշխատանքներ է ծավալում 1771 թ. Սիմեոն Երևանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիմնած տպարանի վերանորոգման ու վերագործարկման ուղղությամբ: Ստեղծում է Տպարանական հանձնաժողով, ճանապարհորդությունից վերադառնալիս իր

¹ Романовский В. Историческая записка об Эриванской гимназии, Тифлис, 1890, С. 15-18.

² Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Հտ. Ա, Երևան, 1984, էջ 52:

հետ բերում է տպարանին անհրաժեշտ տառեր և Սինոդին հանձնարարում անհապաղ հոգալ տպարանին անհրաժեշտ բոլոր մյուս կարևոր պարագաները³: Կաթողիկոսի հետևողական ջանքերով շուտով բարեկարգվում է տպարանը, որտեղ ՀՀ ներկայիս տարածքում գրահրատարակչության սկզբնավորումից և առաջին տպարանի գործարկումից մոտ մեկ դար անց՝ 1868 թ. մայիսին լույս է տեսնում առաջին հանդեսը՝ «Արարատը»:

Ամսագիրը, լինելով Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռի պաշտոնական պարբերականը, բնականաբար, ուներ կրոնա-բարոյական, պատմաբանասիրական անխոտորելի ուղղվածություն: Կրոնական բաժինը պետք է ներառեր կաթողիկոսների կոնդակներ, հրովարտականեր, պատմիչների կենսագրություններ, նրանց երկերից հատվածներ, տեղեկություններ ձեռագրերի մասին և այն: Պատմական բաժինը Հայաստանի նահանգների, գավառների, բնակավայրերի մասին աշխարհագրական, պատմական տեղեկություններ, գրչության օջախների մասին տեղեկություններ պետք է ներառեր: Բարոյականը սուրբ գրոց առակների, առածների ու հանելուկների բարոյախոսության մեկնաբանումն ու ներկայացումը, Բանասիրականը՝ հոդվածներ, նամակներ, ճամփորդական նոթեր և այլն: Այնուհանդերձ, քիչ չեն նաև Արևելյան Հայաստանում և հայաբնակ վայրերում մշակութային այս կամ այն իրադարձությանը նվիրված նյութերը, հաճախ ոչ խորքային վերլուծությունների, այլ, գլխավորապես նորությունների, տեղեկատվությունների, լուրերի ձևաչափով: Մեր խնդիրն է այստեղ ներկայացնել «Արարատ»-ի այդօրինակ հրապարակումները՝ գլխավորապես կանգ առնելով իհարկե, գրադարան-ընթերցասրահների, դրանց նշանակության, գործունեության, գրքափոխանակության ու հավաքածուների համալրման մասին պատմող նյութերին:

1860-1870-ական թվականներին Ախալքալաքում բացվում էին դպրոցներ ու վարժարաններ, մեծանում էր կրթված մարդկանց թիվը, նոր գիտելիքներ ձեռք բերելու հասարակական պահանջմունքը: Այդ նպատակով բացվում էին գրադարաններ և ընթերցարաններ: 1869 թ. փետրվարի 27-ին Սրբոց Վարդանանց հիշատակի օրը Ախալքալաքում բացվում է Հայկական ընթերցարանը⁴: Հոդվածագիրը փաստում է, որ բարերարների նվիրատվություններով բացված ընթերցարան-գրադարանը ուներ 35 բաժանորդ: Ցավոք չի խոսվում գրքային ֆոնդի քանակները, գրականության բովանդակությունը, այցելությունները և այլ գրադարանային գործի համար էական ցուցանիշների մասին: Այս հրապարակումը ապացուցում է, որ հո-

³ Աբեղյան Մ. Գեորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Համառոտ կենսագրություն, Վաղարշապատ, 1899, էջ 54-55:

⁴ Ախալքալաք, Արարատ, Վաղարշապատ, 1869, թ. 12, էջ 178-179:

գևոր-եկեղեցական ուսումնարաններին կից 1880 թ. մայիսի 24-ից գործող հասարակական ընթերցարանին նախորդել է ավելի վաղ գործած այս ընթերցարանը⁵:

1870 թ. Շամախիի գրադարանական ընկերության նախաձեռնությամբ հանգանակված գումարներով տեղի ուսումնարանների երկսեռ աշակերտների համար գրադարան-ընթերցարան է բացվում, որտեղ նվիրատվությամբ ու գնումներով ձեռք բերված գրքեր ու պարբերականներ էին սպասարկվում⁶: «Ընթերցարան հայոց Աղէքսանդրապօլոյ»-ում հոգվածագիրը մարդկային մտավոր և հոգևոր զարգացման գործում կարևորում է ուսումնարանների և ընթերցարան-գրադարանների դերը «...դէպ ի առողջ միտք, դէպ ի հաստատ գաղափար, դէպ ի կատարեալ և արժանաւոր կոչումն մարդկութեան...»⁷: Ընթերցարանը ուսումնարանից, դպրոցից հետո պետք է ճանաչվի իբրև զարգացման մի սուրբ տուն, և այն բարետես ու արժանավայել պահելը պետք է ապահովվի ամենայն ճիգով ու ջանքով: Հոգվածագիրը կարևորում է ընթերցարանին ձեռնհաս միջոցներով գարնան կենդանի պատկեր տալը և հասարակության ուշքը այնտեղ գրավելը: Ընթերցարանը պետք է դառնա առաջադիմության ու լուսավորության հասնելու ճանապարհին հասարակության խորհրդատուն ու ջահակիրը: Այս կարևոր և թերևս եզակի քաղաքային ընթերցարանը մահու և վերակենդանության ազդեցության տակ անբարեկարգ և հիվանդ վիճակում է գտնվում ու թեև նախորդ տարիներին ևս ահազանգվել է այդ մասին, այնուամենայնիվ պատկերը չի փոխվել:

1876 թ. համարներից մեկը անդրադառնում է Ախալցխայի եկեղեցական նորաբաց ընթերցարանին: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է մայիսի 30-ին բացված ընթերցարանի առաջին նպատակը. քանի որ «պարապութիւնը տաղտկացուցիչ է մարդոյ և վնասառիթ ամէն ժամանակ... ուստի հոգևորական դասուցս Ախալցխոյ կարի ցանկալի եղալ ունենալ Ընթերցարան»⁸: Ներկայացվում է ծածկոցապատ սեղանի, աթոռների և 60-ից ավելի միավոր գրքերի առկայության մասին «...որք մի առ մի գրեալ ժապավինեալ տումարի մէջ եւ առ անկորուստ պահպանութիւն յանձնուեցաւ ընթերցարանապահին ու գանձապահին...»⁹: Այնուհետև ներկայացվում են ընթերցարանի բացման մասին Հոգևոր կառավարության պաշտոնական վավերագիրն ու գրադարանի կանոնադրությունը՝ /Կանոնք/: Այդ կանոնադրությամբ սահմանվում են գրադարան-ընթերցարանի գործունեության նպատա-

⁵ Մելքոնյան Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երևան, 2005, էջ 70:

⁶ Միրզաբեգեանց Յովհաննէս: Ընթերցարան Հայոց ի Շամախի: Երկսեռ ուսումնարանք, Արարատ, Վաղարշապատ, 1871, թ. 4, էջ 242-246:

⁷ Մուշեղեանց Յովհաննէս: Ընթերցարան Հայոց Աղէքսանդրապօլոյ, Արարատ, Վաղարշապատ, 1871, թ. 7, էջ 413-414:

⁸ Ընթերցարան եկեղեցականաց յԱխալցխա, Արարատ, Վաղարշապատ, 1876, թ. 11, էջ 433:

⁹ Նույն տեղում, էջ 134:

կը, ամրագրվում են աշխատակիցների պարտականությունները, խնդիրներն ու գործառույթները: Ընթերցարանապետը պարտավոր է որոշակի պարբերականությամբ ստուգել գրադարանային միավորների առկայությունը ու օգտվողների ցուցակը: Գրադարանային միավորները սպասարկվում են ընթերցարանում, իսկ մասնավոր անձինք, ովքեր ցանկանում էին գրադարանի գրքերից, ամսագրերից կամ լրագրերից տուն տանել հոգուտ ընթերցարանի տարեկան 6 ռուբլի մուծելու դեպքում միայն: Ամրագրված են նաև ամեն օր աշխատող ընթերցարանի աշխատանքային ժամերը՝ 8-12 և ցերեկվա 2-ից երեկոյան 7-ը: Կանոնադրությամբ հաստատվում է՝ օգտվողները պարտավոր են լռություն պահպանել, սակայն ընդհանուր համաձայնությամբ թույլատրվում էր նաև բարձրաձայն ընթերցանությունը: Ընթերցարանապետը և գանձապետը ընտրվում էին 1 տարի ժամանակով: Այս հրապարակումը փաստում է այն իրողությունը, որ նախանձախնդիր հոգևոր հայրերը ամենայն հանձնառությամբ ու պատասխանատվությամբ են վերաբերվել նորաբաց ընթերցարանի առաքելությանը և ակնկալել են հաջող ընթացք: Անկասկած, նկատի են առել և ուսումնասիրել ժամանակի գրադարանների մոդելը: Ամեն դեպքում, վերջնական նպատակը եղել է գրագետ, բանիմաց ու կիրթ սերնդի դաստիարակությունը: Այնուհետև ականատես ենք լինում հաշվետվողականության մի օրինակելի դրսևորման. ընթերցարան-գրադարանի պատասխանատուները «Արարատի» միջոցով ներկայացնում են իրենց հաստատության երկամյա գործունեության ամփոփումը:¹⁰

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը նաև մշակութային կորուստներ կրեց: Սակայն հերթական անգամ լծվելով ստեղծագործ աշխատանքի, սկսեց վերականգնել կորցրածը: Այսպես, «Արարատի» 1879թ. համարներից մեկում զետեղված լուրը հայտնում է, որ պատերազմից կրած զանազան հարվածներից հետո կարճ ժամանակում բարեկարգվել է Կարսի դպրոցը և բացվել է գրադարանը, իսկ նույն թվի փետրվարի 18-ին բացվել է ընթերցարանը՝ Թիֆլիսից ու Ալեքսանդրապոլից 1200 միավոր նվիրաբերված գրականության հիման վրա¹¹: Նվիրատուներն էին Թիֆլիսի առաջնորդը, հրատարակիչ Էնֆիաճյանները, խմբագիրներ, գրավաճառներ և այլք: Գրադարանի բաժանորդների թիվը 50 է, վարձը՝ ամսական 50 կոպեկ կամ տարեկան «6 մանեթ»: Հոգվածագիրը հետագա նվիրատվությունների հույս է փայփայում՝ ի նպաստ «...յառաջադիմութեան մէջ նոր ոտ դնել ցանկացող Ղարսի... գրադարանին»¹²:

¹⁰ Ախալցխայի հայ հոգեւորականների ընթերցարանի երկամեայ հաշիւը, Արարատ, Վաղարշապատ, 1880, թ. 1, էջ 26-27:

¹¹ Ղարսի դպրոց եւ ընթերցարան, Արարատ, Վաղարշապատ, 1879, թ. 5, էջ 233:

¹² Նույն տեղում, էջ 234:

Հետաքրքիր տեղեկատվություն կա Երուսաղեմի Հայոց Հարություն պատրիարք Վեհապետյանի անձնական ծախսերով Ս. Թորոս եկեղեցում Մայր Աթոռից այնտեղ փոխադրված 2000 հայկական ձեռագրերի համար գրադարակներ շինելու, եկեղեցուն կից երկու սենյակները միացնելու ու գրատուն կահավորելու մասին: Գրադարանապետ է նշանակվում Սահակ եպիսկոպոս Խապայանը, ում հսկողության տակ «ուսումնատենչ եղբայրակիցները հետամուտ պիտի լինեն իրենց մտավորական զարգացման»¹³: Այդ ժամանակ արդեն Երուսաղեմում գործում էին Դոմինիկյան, Ֆրանչիսկյան, Օգոստինյան միաբանությունների ճոխ գրատները, որտեղից, սակայն, գրքերը դուրս չէին տրվում:

Թիֆլիսը հայ մշակույթի կարևորագույն կենտրոններից էր, որտեղ գործում էին բարեգործական ու մշակութային-ազգագրական ընկերություններ: 1908 թ. Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունը մարտի 30-ի իր ժողովում որոշում է ընդունում գրադարաններ բանալ Շուշիում, Ախալքալաքում, Նախիջևանում¹⁴: Իսկ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, որը բացվել էր 1881 թ. Թիֆլիսում և իր մասնաճյուղերն ուներ մի շարք քաղաքներում /Կարս, Նախիջևան, Ալեքսանդրապոլ և այլն/, որոշում է կայացնում Արեշյանի տունը վերածել «Կենտրոնական հայկական գրադարանի» և սորան կից ընթերցարանի, որտեղ էլեկտրական լուսավորության պայմաններում կարող էր ընթերցել 250 օգտվող: Վերաշինության ծախսերը հոգում էր Պետրովսկ քաղաքից Ալեքսանդր Ղարաջյանը: Ի նշան երախտագիտության՝ գրադարանը կրում է բարեգործի անունը¹⁵:

Արևմտյան Հայաստանի գավառներում ժողովրդի կրթական գործի կազմակերպման առաջամարտիկներից էր Խրիմյան Հայրիկը, ով դեռևս 1857 թ. Վարագավանքում դպրոց էր բացել, որտեղ դասավանդում էին մանկավարժության ժամանակի առաջավոր ձևերով և մեթոդներով: Դպրոցին կից գործում էր նաև տպարան և գրադարան: Գրադարանը 1860-80-ական թթ. ուներ 1300 անուն պատմական, կրոնական, բանասիրական, գիտական գրականություն, այդ թվում նաև ձեռագիր մատյաններ, մոտ 40 լրագրեր ու հանդեսներ: Սակայն թուրքական կառավարության վարած քաղաքականության, քրդական հարձակումների, թալանի ու հափշտակության հետևանքով գրադարանային վավերագրերի թիվը կտրուկ նվազել էր՝ հասնելով 800-ի: Գրադարանի պատասխանատուն՝ Վարագա Հայրիկյան վարժարանի տեսուչ Ա. Դարբինյանը, դիմում է Արարատի խմբագրությանը՝ նրա միջոցով գրադարանին հրատարակիչների, հեղինակների հին ու նոր հրա-

¹³ Տաճկահայք, Արարատ, Վաղարշապատ, 1899, թ. 3-4, էջ 119:

¹⁴ Մանր լուրեր, Արարատ, Վաղարշապատ, 1908, թ. 4, էջ 434:

¹⁵ Նույն տեղում, էջ 435:

տարակույթյունների տրամադրումը կազմակերպելու ակնկալիքով¹⁶: Պարտավորվում են բազմօրինակ գրքերը տրամադրել Վարագա շրջակա գյուղերի դպրոցների գրադարաններին, որոնցում դասավանդում են իրենց շրջանավարտները: Հետաքրքիր ակնարկ կա այն մասին, որ գրադարաններից իրավունք ունեն նաև գարնանից աշուն օդափոխության համար Վարագ այցելած հովեկները: Արարատի էջերում ականատես ենք լինում բանավիճային մշակույթի մի ուշագրավ դրսևորման: Ուշագրավ է այն առումով, որ բանավեճի նյութը Էջմիածնի Հոգևոր ճեմարանի գրադարանն է. գրադարանը 1901թ. ուներ 20.000-ից ավելի միավոր գրականություն՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով դասագրքեր, բառարաններ, գեղարվեստական ու պատմագրական գրքեր: 1900-1901թթ. գրադարանի ֆոնդը աճել է 2093 միավորով, որի միայն 330 միավորը գնվել է ճեմարանի ծախսով, իսկ մնացածը ձեռք են բերվել բարերարների հոգաժությամբ ու ազգային գործիչների նվիրատվությամբ¹⁷: Բանավիճող կողմերից մեկը Ստեփան Կանայանն է՝ Պետական հանրային գրադարանի /ներկա Հայաստանի ազգային գրադարան/ առաջին գրադարանապետը: Նամակները պատասխաններ են՝ ուղղված Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի գրադարանի մտահոգիչ իրավիճակի հետ կապված խնդիրներին, որոնք բարձրաձայնում է տեսչի օգնական Ռոստոմյանը: Չխորանալով բանավեճի հռետորաբանության և երկու կողմի մեղադրական փոխհրաձգության մեջ, տողերի արանքում ակնհայտ երևում են Կանայանի գրադարանային գործունեության մասնագիտական դրսևորումները: Նա ճեմարանի գրադարանի գրադարանապետն էր 1907 թվականից և իր իսկ վկայությամբ գրադարանն ընդունել էր բավական անմխիթար վիճակում: Կարճ ժամանակում, սակայն, գրքերի ցուցակագրության, հին, մաշված մատյանները նորերով փոխարինելու, սպասարկված և չվերադարձված գրականության հետքերման, ընթերցողական տոմսակների, գրականության դասակարգման ոլորտում բավական աշխատանքներ են կատարվում: Բոլոր անպատեհ ծագող խնդիրների դեմն առնելու համար Կանայանը կարևորում է գրադարանի հավաքածուի «վերստուգութիւնը» և դրա կանոնակարգը, որով առաջնորդվելով պետք է մեկնարկեն աշխատանքները¹⁸: Սրանք վկայում են Կանայանի մասնագիտական հմտությունների, կազմակերպչական ունակությունների մասին, որոնք պետք է հետագայում դրսևորվեին Պետական մատենադարանի /Ազգային գրադարանի/ գրադարանապետության

¹⁶ Դարբինեանց Ա. Վարագայ Հայրիկեան գրադարան, Արարատ, Վաղարշապատ, 1909, թ. 4, էջ 387-388:

¹⁷ Մայր Աթոռի ճեմարանի ԻԵ տարեդարձին, Արարատ, Վաղարշապատ, 1901, թ. 9-10, էջ 436:

¹⁸ Կանայեանց Ստեփան: Ս. Էջմիածնի Գ. Հոգևոր ճեմարանի տեսչի օգնական Տ. Մենտոր Ռոստոմեանին, Արարատ, Վաղարշապատ, 1910, թ. 8, էջ 780-782:

առաջին ծանրագույն ժամանակներում¹⁹ (1919 թ. մայիսին Հանրային կրթության և արվեստների նախարար Գ. Մելիք-Ղարաբյոզյանի հրամանով Կանայանը նշանակվել էր Հանրային պետական գրադարանի վերատեսուչ):

Ամսագրի էջերում անդրադարձ է եղել նաև Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի գրադարանին: Մատենադարանապետ Գարեգին քահանա Կիրակոսյանի թղթակցության մեջ ներկայացված է 5 մեծ սենյակներում տեղավորված և 2500 միավոր գրականություն ունեցող հաստատության գործունեությունը: Ձեռագիր մատյանները թվով 598 են: Բավական թիվ են կազմել նաև օտարալեզու, մասնավորապես անգլերեն գրքերը, դրանց թվում նշանավոր Բրիտանիկա հանրագիտարանի հատորները, նաև Կովկասի պատմության ռուսերեն հատորները: Գրադարանապետը մի քանի հին ձեռագրերի մատենագիտական մանրամասն տվյալներ է նշում՝ ներկայացնելով դրանց հիշատակարանները: Հետագայում նշանավոր մատենագետ Լևոն Մինասյանը ուսումնասիրել է գրադարանի ձեռագրերը և հրապարակումներ արել²⁰: Հետաքրքիր տեղեկություն կա նաև Բոմբեյում հրատարակվող անգլերեն “Indian Times” շաբաթաթերթի էջերում հիշյալ գրադարանի մասին հոդվածին²¹:

1880-ական թթ. վերջերին աշխատանքներ են տարվում 20-ամյա ամսագրի հայագիտական ուղղվածության ուժեղացման ուղղությամբ: Մայր Աթոռի միաբաններից բացի համագործակցության են հրավիրվում նաև ճեմարանի ուսուցչական խումբն ու «ազգիս մէջ ամենուրեք գտնվող բանասեր գիտնական և ուսումնական անձինք», որոնք իրենց մտահոգությունների և ուշադրության ծիրի մեջ են պահում ազգային պատմության, գրականության, եկեղեցու, կրթության և մշակույթի բարեկարգության ու վերաշինության խնդիրները: Ավելանում են ամսագրի էջերը: 1888թ. առաջին համարներից ամսագիրը նոր խորագիր ուներ՝ «Ս. Էջմիածնի գրադարան»: Գրադարանը նշված ժամանակաշրջանում աշխարհում գտնվող հայերեն ձեռագրերի հավաքածուներից ամենամեծն է, իսկ նրա դռները Մակար Եպիսկոպոսի հրամանով բաց էին հանդեսի խմբագրակազմի համար, որպեսզի ձեռագրերում հայոց պատմության փաստերը իբրև հում նյութեր հետզհետե հրատարակվեն և հայ հետազոտողների համար հնարավորություն ստեղծեն գրելու հայոց պատմությանը նվիրված գիտական աշխատություններ: Որոշվում է հրատարակել ձեռագիր հուշարձանների հիշատակարանները ժամանակագրական կարգով²²:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 122, ց. 2, գ. 128, թ. 20:

²⁰ Մինասեան Լ. Ցուցակ ձեռագրաց Նոր Զուլայի Ս. Ամենափրկչեան Վանաց թանգարանի, Վիեննա, 1972:

²¹ Կիրակոսեան Գարեգին: Նոր Զուլայի Մատենադարան, Արարատ, Վաղարշապատ, 1910, թ. 9, էջ 881-886:

²² Ս. Էջմիածնի գրադարան, Արարատ, Վաղարշապատ, 1888, թ. 1, էջ 23-27:

Արարատը, Գարեգին Հովսեփյանի բնորոշմամբ, երկու նպատակի է ծառայել, մի կողմից քահանայական դասակարգի և միջակ ընթերցող հասարակության և մյուս կողմից՝ գիտական թերթ է եղել: Թիրախում ունենալով կրոնաբարոյական, աստվածաբանական, դավանաբանական, աղբյուրագիտական բնույթի նյութերի և հետազոտությունների հրատարակությունը՝ «Արարատը» իր թողարկումներում անդրադառնում է նաև հայկական գրադարաններին և կարևորում է դրանք՝ որպես վերոնշյալ գիտական ճյուղերի ու բնագավառների հաջողությունն ու կայացումն ապահովող հաստատություն:

«Արարատ»-ի 100-ամյակի առթիվ կազմվել է հանդեսի մատենագիտությունը²³ ժամանակագրական-այբբենական կարգով, օժանդակ ցանկերով: Վերջին տարիների տեխնոլոգիական առաջընթացը նոր հնարավորություններ է ստեղծել գրադարանային-մատենագիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, գրադարանային հավաքածուների հասանելիության ապահովման ուղղությամբ: Հայաստանի ազգային գրադարանն ու ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը Հայ պարբերական մամուլի շտեմարանում ավարտել են «Արարատ»-ի բոլոր տարիների թվայնացման և էլեկտրոնային մատենագիտության կազմման աշխատանքները: Դրանք հասանելի են <http://tert.nla.am> և <http://ararat.asj-oa.am> հասցեներից ազատ ու անվճար դիտման, ներբեռնման և օգտագործման համար: Լրիվ տեքստային այս երկու շտեմարանները հետազոտողներին և պարզապես հետաքրքրվող անձանց հնարավորություն են տալիս առանց գրադարան այցելելու աշխարհի ցանկացած վայրում, որտեղ կա համացանց և համակարգիչ, առցանց կարդալ 150-ամյա Արարատի համարները և ծանոթանալ հրապարակումներին:

SUMMARY

In 2018 "Ararat" magazine celebrated its 150th anniversary. It is the first magazine in Eastern Armenia, the first official newspaper of the Mother See of Holy Etchmiadzin. The publication of the magazine was initiated by Catholicos Gevorg IV, who also restored the printing house founded by Catholicos Simeon of Yerevan, re-equipped it with printing materials and modern equipment. Focusing on religious and moral, historical and philological, educational and cultural, scientific and manuscript materials, the magazine also touches upon libraries and library collections, highlighting their primary significance in providing the quality of education, obtaining and supplying textbooks and training handbooks, in upbringing and development of children and teenagers, building their inter-personal relationships, in the enlightenment and progress of the society.

²³ Մատենագիտություն «Արարատ» հանդեսի /Կազմ.՝ Սեդա Կոծինյան, խմբ.՝ Սուրեն Քոլանջյան, Արթուր Հատիսյան, Երևան, 1970, 290 էջ:

ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԻՆԵ

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն*

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ԱՅԲԲԵՆԱԿԱՆ,
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ
1801-1900 ԹԹ.**

Սկիզբը նախորդ համարներում

918. Ալեքսանյան Մ. Գեղագիր ալբոմ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1891.- 6 էջ:
919. Ալոիզի Ի. Համառոտ ձեռնարկ կանոնավոր շերամապահության.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 28 էջ:
920. Աղայան Ղ. Անահիտ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1891.- 56 էջ:
921. Աղանյանց Գ. Կարնո գաղթը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 32 էջ:
922. Աղանյանց Գ. Կրոնի դասագիրք. երկրորդ տարվա ուսումն. հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար.- Թիֆլիս: Տպարան Մ. Շարաձեի, 1891.- 47 էջ:
923. Աղանյանց Գ. Օրացույց 1891 թվականին Քրիստոսի Հայկյան ՏՅՁԳ-4383 և տոմարական թվականի Ազգիս ՌՅԽ-1340.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 46 էջ:
924. Աղանյանց Գ. Օրացույց 1892 նահանջ թվականին Քրիստոսի Հայկյան ՏՅՁԳ-4384 թվականին և տոմար Ազգիս ՌՅԽԱ-1341.- Թիֆլիս: Տպարան Մ. Շարաձեի, 1891.- 128 էջ:
925. Աղբյուր ծնողների և դաստիարակների համար: Հտ. 1.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1891.- 42 էջ:
926. Արասխանյան Ա. Արևելյան ազգերի հին պատմությունը.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 284 էջ:
927. Արարատյան Ա. Սուտ ճգնավոր.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 34 էջ:
928. Արծրունի Գ. Էվելինա.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1891.- 106 էջ:
929. Աուերբախ, Գյուղական ջութակահար.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1891.- 13-31 էջ:
930. Բալադյան Ս. Միկրոբները.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 34 էջ:
931. Բարխուդարյան Ա. Հաշիվ Ղարաբաղի Հայոց թեմական Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձության.- Թիֆլիս: 1891^o:

932. **Գարշին Վ.** Չորս օր պատերազմի դաշտում.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 29 էջ:
933. **Գեորգ-Բեգյան Յ. Պանճուլազյան Մ.** Թվաբանական խնդիրների ժողովածու: Միստեմատիկական ընթացք: Մասն 2-րդ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 126 էջ:
934. **Գոլտենբերգ,** Թվաբանական խնդիրներ և օրինակներ: Մաս 1.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 103 էջ:
935. **Դոդե Ա.** «Խոչնդոտ».- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 100 էջ:
936. **Դոդե Ա.** Տարակոնցի Տարտարենը.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 176 էջ:
937. **Եաղուբյան Կ.** Հայերեն-ռուսերեն բառարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 464 էջ:
938. **Եղիշե,** Եղիշեի պատմությունը Վարդանի և հայոց պատերազմի համար.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 16 էջ:
939. **Իսբեն Հ.** Դոկտոր Շտոկման կամ ժողովրդի թշնամին.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 173 էջ:
940. **Ինչ է կայծակը.** Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 32 էջ:
941. **Իվան Ցարնիչի** կախարդական պատմությունները.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 15 էջ:
942. **Լամարթին Ա.** Վիլհելմ Թելլ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 48 էջ:
943. **Լեբմոնտով Մ. Դև.** Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 57 էջ:
944. **Լեո,** Վերջին վերքեր: Մասն 1.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 151 էջ:
945. **Լեֆլեր Է.** Մրցումն հասարակության հետ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 138 էջ:
946. **Լիսիցյան Վ.** Հայկական նշանագրեր: Տեսր № 2.- Թիֆլիս: Վիմագր. Շահբազյանցի, 1891.- 9 էջ:
947. **Լունկևիչ Վ.** Երկրաշարժ և հրաբուխ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 48 էջ:
948. **Կանոնագրություն** հայուհեայ բարեգործական ընկերության Թիֆլիսում.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 21 էջ:
949. **Կարամզին Ն.** Թշվառ Եղիսաբեթ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 51 էջ:
950. **Կարամզին Ն.** Թշվառ Լիզա.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 47 էջ:
951. **Կարմեն Ս.** Օմուլ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 32 էջ:
952. **Կենտրոնական** գրավաճառանոցի հայերեն գրքերի լիակատար ցուցակ.- Թիֆլիս: Տպարան Մ. Շարաձեի, 1891.- 112 էջ:
953. **Կուլիկովա,** Շնիկ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1891.- 28 էջ:
954. **Հայգե Պ.** Բեաթրիչե.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 103 էջ:
955. **Հայգե Պ.** Նոնցայի բերդը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 109 էջ:

956. Հաշիվ Հայուհյաց բարեգործական ընկերության թիֆլիսում վասն 1890 ամի.- թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 15 էջ:
957. Հենչել, Բանավոր և գրավոր հաշվելու խնդիրներ ծխական դպրոցների համար.- թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 105 էջ:
958. Հետաքրքիր աղջիկ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 30 էջ:
959. Հյուկո Վ. Եղբայր եղբոր դեմ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 48 էջ:
960. Ղարազյոզյան Յ. Զեյթունցիներ, տոհմագրական պատկեր.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891^o:
961. Ղարազյոզյան Յ. Կնոջ կոչումը և դրությունը հասարակության մեջ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 31 էջ:
962. Ղուկասյան Հ. Քերականություն գրաբար լեզվի հայոց ի պետս նորավարժից.- թիֆլիս: Տպարան Մ. Շարաձեի, 1891.- 150 էջ:
963. Մալխասյանց Ս. Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները.- թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 52 էջ:
964. Մանդինյան Ս. Նահապետական և հայրենի աշխարհ.- թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1891.- 213 էջ:
965. Մանվելյան Լ. Չալաբիների արշավանքը.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 52 էջ:
966. Մարիայան Մ. Հեղինե: Մաս 1.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 190 էջ:
967. Մարիայան Մ. Հեղինե: Մաս 2.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 267 էջ:
968. Մեհրաբյան Ա. Բնության երգեր և բանաստեղծություններ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 103 էջ:
969. Մուսինյան Մ. Շերամապահական խրատներ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 18 էջ:
970. Տը Մոպասան Գիւ, Գյուղական աղքատ.- թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1891.- 12 էջ:
971. Նազարյան Հ. Օրացույց 1892 նահանջ թվականին Քրիստոսի և Հայկա ՏՅՁԴ-4384 թ.- թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.- 224 էջ:
972. Նամայան Ա. Եզիդ աղջիկը.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 28 էջ:
973. Նամայան Ա. Ծանր քարը.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 16 էջ:
974. Նամայան Ա. Մեր ի՞նչը կը պակսի.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 20 էջ:
975. Նամայան Ա. Մինասի եզը.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 16 էջ:
976. Նամայան Ա. Նվազված կյանքը.- թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 16 էջ:

977. **Նամայան Ա.** Պատրիկյանի նամակները.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1891.- 240 էջ:
Գրադարանի գործունեությունն իրականացվում է ՀՀ սահմանադրությամբ, «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքով, ՀԱՊՀ-ի գործող օրենսդրությամբ, Կոլեկտիվ պայմանագրով, Համալսարանի այլ ներքին նորմատիվ ակտերով, գրադարանի կանոնադրությամբ:

2004 թվականից Գիտատեխնիկական գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի և Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի անդամ է:

Յուրահատուկ է ՀԱՊՀ-ի գիտատեխնիկական գրադարանի կայքէջը, որը ավանդական -թվային գրադարան համատեղումով վիրտուալ հարթակ է:

ՀԱՊՀ-ի գրադարանի կայքէջը պարունակում է ամփոփ տեղեկատվություն գրադարանի կառուցվածքի, գրադարանի մատուցած ծառայությունների, ընթերցող դառնալու կարգի մասին:


Նախագծված կայքը հնարավորինս շատ ինֆորմացիա է պարունակում ՀԱՊՀ գրադարանի կառուցվածքի, ընթերցողներին մատուցվելիք ծառայությունների, գրադարանի էլեկտրոնային բազայի, այլ գրադարանների կայքէջերի, գրադարանային կրթության, գրադարանում տեղի ունեցող իրադարձությունների, նորությունների և աշխարհի գրադարանների մասին:

Կայքը հնարավորություն է տալիս ընթերցողին իր հարցերը, առաջարկությունները ուղղել գրադարանավարին, հաղորդագրություն ուղարկելով էլեկտրոնային փոստին: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է գրանցվել առցանց՝ էլ. փոստին ուղարկելով համապատասխան տվյալներ, ի պատասխան ստանալով կայքի մուտքաբառ՝ login:

Կայքը ստեղծված է HTML սկրիպտային լեզվով /տեգերով/:

Կայքէջը դեռ հասցե չունի, անհրաժեշտ փոփոխություններից հետո կտեղադրվի՝ https://npua.am/student_council/library_student_council/ հասցեով:

Նախնական տեսքը հետևյալն է՝



Նկ. 1. Գլխավոր էջ

Մենյուի կետերն են՝


Գլխավոր – ցույց է տալիս գլխավոր էջը

Գրադարանի մասին – ներկայացված է գրադարանի կառուցվածքը՝ 4 բաժինները:

Ծառայություններ – այս հղումը սեղմելիս էջի կենտրոնում տեսնում ենք թվարկված ծառայությունները

Հղումներ – այստեղ ներկայացված են ընթերցողներին անհրաժեշտ հղումները՝


Համահավաք քարտարան, Համաշխարհային թվային գրադարանի հասցեն՝ <http://www.wdl.org>, ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանի հասցեն՝ <http://flib.sci.am>, ՀԱԳ՝ <http://nla.am> և այլն:



Նկ. 2. Գրադարանի մասին

Հարց գրադարանավարին – այս կետը ստեղծվել է, որպեսզի կայքի այցելուն իր հարցերն ուղղի գրադարանավարին: Հնարավորություն է ընձեռվում ընթերցողին օնլայն գրանցվել, ստանալ անհրաժեշտ տեղեկություն իր տացքի մասին՝ առանց գրադարան այցելելու:


Ուղեցույց- ստեղծվել է ուղեցույց այն ընթերցողների համար, ովքեր առաջին անգամ են էլեկտրոնային պատվեր կատարում:




Նկ.4. Ծառայություններ

Առցանց պատվեր- վերը նշված քայլերից հետո ընթերցողը կարող է մուտք գործել էլեկտրոնային քարտարան, գիրք փնտրել և պատվիրել ՀԱՊՀ-ի քարտարանից:

Էլեկտրոնային գրքեր – այս բաժնում կան հաճախ պատվիրվող, օգտագործվող գրքերի էլեկտրոնային տարբերակները:




Նկ.6. Հարց գրադարանավարին



Նկ.7. Էլեկտրոնային գրքեր

Գրադարանային կրթություն – այստեղ ներկայացված է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի համապատասխան ֆակուլտետում ուսմանը՝ բակալավրի համար, և ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնում առկա մագիստրոսական կրթական ծրագիրը:



Նկ.8. Գրադարանային կրթություն

Այլ- բաժնում ներկայացված է գրադարաններին վերաբերող հետաքրքիր տեղեկատվություն՝ Ալեքսանդրիայի գրադարան, Էլեկտրոնային գիրք աշխարհի գրադարանների մասին՝ հեղինակ՝ Նալպանտեան Յովսեփ, Էլեկտրոնային գիրք

աշխարհի ամենագեղեցիկ գրադարանների մասին՝ նյութը վերցված է ինտերնետից,

<https://gradaranblog.wordpress.com/2013/09/24/%D5%A1%D5%B6%D5%BF%D5%AB%D5%AF->

[%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A](#)

[B-%D5%A3%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/](#) կայքի վրա հղում է արված՝ անտիկ շրջանի գրադարանների մասին,

հղում տեսանյութերի վրա:




Նկ.9. Հետաքրքիր նյութեր գրադարանների մասին

Ըստ <file:///C:/Users/%D0%97%D0%A9%D0%BF/Desktop/tez/html-koder/Koder/lavaguyn.html> կայքի՝ 2018 թ. ողջ աշխարհում լավագույն գրադարան է ճանաչվել Նիդերլանդների Դեն Հելդեր քաղաքի School7 գրադարանը:

Հետադարձ կապ- նշված է գրադարանի հասցեն՝

Գրադարանի հասցեն է Տերյան 105, ՀԱՊՀ-ի 2-րդ մասնաշենքի առաջին հարկում՝ մուտքը գլխավոր ընթերցասրահի միջով:

Կայքում կա նորությունների բաժին, որտեղ պարբերաբար կտեղադրվի անհրաժեշտ ինֆորմացիա տեղի ունենալիք միջոցառումների վերաբերյալ:



Նկ.10. Նորություններ

Ուղեցույց <http://lib.politechnic.am> էլեկտրոնային քարտարանից օգտվելու համար

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտատեխնիկական գրադարանում գրանցվելու համար անհրաժեշտ է Գրանցման սրահ ներկայացնել 3x4 չափի լուսանկար և անձնագիր:

Ընթերցողին տրվում է ընթերցողական էլեկտրոնային քարտ:

Յուրաքանչյուր ընթերցող ունենում է իր մուտքաբառն ու գաղտնաբառը, որի միջոցով հնարավորություն է ստանում մուտք գործել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտատեխնիկական գրադարանի էլեկտրոնային գրացուցակի կայքէջ:

Գրադարանի ընթերցողական էլեկտրոնային քարտ

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ http://npua.am 19010114459 Լափայան Գևորգ Քոմպ. համ. և ինֆորմ. ֆակ. 824  http://lib.polytechnic.am/	National Polytechnic University of Armenia LIBRARY 19010114459 Lapavan Gevorg Comp. Systems and Inform., 824 Գրքի կորստի դեպքում ընթերցողը պարտավոր է այն փոխարինել նույն կամ ավելի նոր հրատարակությամբ կամ վճարել: <table border="0"> <tr> <td>Մինչև 100 էջ գրքերի դեպքում</td> <td>1000 դր.</td> </tr> <tr> <td>100 էջից մինչև 199 էջ գրքերի դեպքում</td> <td>2000 դր.</td> </tr> <tr> <td>200 էջից մինչև 299 էջ գրքերի դեպքում</td> <td>3000 դր.</td> </tr> <tr> <td>300 էջից ավել էջերով գրքերի դեպքում</td> <td>5000 դր.</td> </tr> </table> 2000թ-ից հետո հրատարակված գրականության համար վճարել գրքի գինը, եթե այն գերազանցում է 5000 դրամը:	Մինչև 100 էջ գրքերի դեպքում	1000 դր.	100 էջից մինչև 199 էջ գրքերի դեպքում	2000 դր.	200 էջից մինչև 299 էջ գրքերի դեպքում	3000 դր.	300 էջից ավել էջերով գրքերի դեպքում	5000 դր.
Մինչև 100 էջ գրքերի դեպքում	1000 դր.								
100 էջից մինչև 199 էջ գրքերի դեպքում	2000 դր.								
200 էջից մինչև 299 էջ գրքերի դեպքում	3000 դր.								
300 էջից ավել էջերով գրքերի դեպքում	5000 դր.								

<http://lib.polytechnic.am>




Գրանցում դաշտ - Մուտքաբառ - EU**** Գաղտնաբառ - ****




«Փնտրում» դաշտում գրում ենք կամ գրքի վերնագիրը, կամ հեղինակի անուն, ազգանունը, և սեղմում Գնա կոճակը:

Ձախ մասում տեսնում ենք հեղինակներին:




Նկ.4. Գրքի պատվիրում

Գիրքը պատվիրելու համար սեղմել՝ Դնել պահում կոճակը, հետո՝ Հաստատել-Confirm hold կոճակը:



Նկ.5.Ընթերցողի տաքք

Բացվում է հետևյալ պատուհանը:



Նկ.6. Ընթերցողի տացք

Տեսնում ենք ընթերցողի պատվիրած և վերցրած գրքերի ցուցակը:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գրադարանում շարունակվում են աշխատանքները՝ կայքէջը նորություններով, նորամուծություններով թարմացնելու, ինչպես նաև տեխնիկական ապահովվածությունը լիակատար դարձնելու ուղղությամբ: Մյուս կողմից, գրադարանավարների ուշադրության կենտրոնում է էլեկտրոնային սպասարկում, ինչը առավել մատչելի դյուրին կդարձնի ընթերցողների պատվերների բավարարումը:

SUMMARY

The National Polytechnic University's Library website provides complete information about the library's activities and services. The works are continuing to update the website with innovations, innovations, and to make technical backup complete.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ
(Վիճակագրական վերլուծություն)

Բանալի բառեր՝ գրադարան, թվային տեխնոլոգիաներ, էլեկտրոնային շտեմարաններ, վիճակագրական վերլուծություն, մատենագիտական նկարագրություն:

Keywords. library, digital technologies, electronic databases, statistical analysis, bibliographical description.

Մատենագիտության պատմական զարգացման ընթացքում պարբերաբար փոխվել են կազմման սկզբունքներն ու առաջադրված պահանջները: 20-րդ դարի վերջից սկսած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը բեկունային դարձավ գիտության, մշակույթի, կրթության, տնտեսության և հասարակության առանցքային նշանակություն ունեցող բոլոր ոլորտների համար: Տեղեկատվության հավաքագրումը, կուտակումը և տարածումը գերխնդիր էր տեղեկատվական հասարակության կառուցման ճանապարհին: Այդ խնդրի լուծման կարևորագույն օղակները դարձան գրադարանները, արխիվները, թանգարանները, որոնց առաջադրված աշխատանքի կազմակերպման նոր պահանջների մեջ առաջնային դարձան էլեկտրոնային շտեմարանները՝ որպես մատենագիտական ինքնատիպ աղբյուրներ: Էլեկտրոնային շտեմարաններում մատենագիտական նկարագրության սկզբունքները էական փոփոխություններ չկրեցին, սակայն տեղեկատվության որոնողական համակարգի ճկունությամբ շտեմարանները գերազանցեցին մատենագիտության ավանդական ձևաչափով կազմված թղթային տարբերակներին: Ներկայացնենք Հայաստանի ազգային գրադարանի շտեմարանների թեմատիկ ուղղվածությունը և դրանց շուրջ անցկացված վիճակագրական հարցման արդյունքները՝ ճշգրտելով այդ շտեմարանների կիրառելիության սահմանները:

Այսօր աշխարհի գրեթե բոլոր գրադարաններն ունեն իրենց շտեմարանները՝ տարբեր բովանդակություններով, ձևաչափերով, ընդգրկվածությամբ: Յուրաքանչյուր գրադարան առաջարկում է իր ծառայությունները՝ աշխատելով ներգրավել առավել մեծ թվով ընթերցողների: Ընդարձակվում են մատենագիտական նյութի որոնման հնարավորությունները, ինչն էլ հիմք է դառնում առավել ամբողջական շտեմարան ստեղծելու համար:

Հայաստանի Հանրապետության գրադարաններում էլեկտրոնային շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 20-րդ դարի վերջից: 2000 թ. Ազգային գրադարանի, Ազգային գրապալատի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի, Երևանի պետական համալսարանի գրադարանի աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խումբը պատրաստեց հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանցի հայեցակարգը: Նախագծին տրվեց «Հայաստանի գրադարանային ավտոմատացված ցանցի ստեղծում» անվանումը¹:

Մրցույթի արդյունքում ընտրվեց իսրայելական ExLibris կազմակերպության Aleph համակարգը, որի հիման վրա ստեղծված Համահավաք էլեկտրոնային քարտարանը դարձավ տեղեկատու շտեմարան՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնողական դյուրին համակարգով: 2017 թ. մի շարք պատճառներից ելնելով՝ այն փոխարինվեց Koha ծրագրով:

Բացի Համահավաք գրացուցակից, Հայաստանի ազգային գրադարանում ստեղծվել և ձևավորվել են բազմաթիվ թեմատիկ շտեմարաններ՝ Greenstone կամ Koha ծրագրերի հիմքի վրա՝ հիմք ընդունելով նկարագրության Marc21 ստանդարտը:

Greenstone ծրագրով ստեղծվել և ձևավորվել են.

Հայ գիրքը 1512-1800 թթ.	Հայ տպագրության 500-ամյակ
Հայ գիրքը 1801-1850 թթ.	Հայոց ցեղասպանությունը օտարալեզու մամուլում
Հայ գիրքը 1851-1900 թթ.	Քարտեզներ
Եզակի հրատարակություններ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (մինչև 1800 թ.)	Հայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին
Անթվակիրներ	Արցախյան շարժում
«Արև» օրաթերթ	Աստվածաշունչ
Մամուլի հոդվածներ	Տպարաններ
Հայ տպագրության 400-ամյակ	Հմայիլներ


Koha ծրագրով ստեղծվել և ձևավորվել են.

- «Հայ գիրք» շտեմարանը
- «Հայ մամուլ» շտեմարանը
- «Հեղինակավոր գրառումներ» շտեմարանը

¹ <http://www.flib.sci.am/arm/archive/pdf/10yearstogether.pdf>

«Հայ գիրք» և «Հայկական շարունակական հրատարակություններ» շտեմարաններ:

Իրենց ընդգրկվածությամբ, ամբողջականությամբ Հայաստանի ազգային գրադարանում ստեղծված տարաբնույթ էլեկտրոնային շտեմարանների շարքում առանձնանում են «Հայ գիրք» (տես նկ. 1) և «Հայկական շարունակական հրատարակություններ» (տես նկ. 2) շտեմարանները², որոնց ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թվականից ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում, իսկ 2012 թվականից՝ Հայաստանի ազգային գրադարանում:



նկ. 1



նկ.2

Երկու շտեմարաններում էլ սկզբունքը մեկն է՝ հայատառությունը: Նպատակը՝

1. Ամբողջական ներկայացնել հայ գրքի և մամուլի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը:

2. Հավաքել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրականությունը՝ ապագայում կորուստներից խուսափելու նպատակով:

3. Ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի և պարբերականների աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:

² Շտեմարանները հասանելի են համացանցի հետևյալ հասցեներով՝ <http://tert.nla.am>, <http://haygirk.nla.am/>

4. Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը և մամուլը՝ ընթերցողական լայն լսարան ունենալու համար:

5. Հավաքածուների երկարաժամկետ պահպանություն:

6. Հավաքածուների թվային պատճեններով սպասարկում:

Բովանդակային տեսանկյունից շտեմարանները տարբերվում են իրարից: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ներառվում են 1512 թվականից մինչ այսօր աշխարհի տարբեր երկրներում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը: Առանձնանում են նաև բազմալեզու հրատարակությունները, որոնց բնագիր լեզուներից մեկը հայերենն է: Ներառված են ատլասներ, քարտեզներ, ժողովածուներ, հմայիլներ, կատալոգներ, պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր՝ շուրջ 127.165 միավոր:

«Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանում ներառված են 1794 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծագերում հրատարակված հայատառ պարբերականները: Այստեղ ներառվում են նաև էլեկտրոնային, այլալեզու, ինչպես նաև երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն անվանումները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է, ինչպես նաև էլեկտրոնային պարբերականներ՝ շուրջ 5757 գրառում:

Շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Մատենագիտական ճիշտ նկարագրությունների դեպքում ընտրելով համապատասխան դաշտը՝ նյութը հնարավոր է փնտրել ըստ հեղինակի, վերնագրի, տպագրության վայրի, տարեթվի կամ ժամանակաշրջանի, լեզվի և այլն: Ըստ այդմ՝ կարելի է ստանալ վիճակագրական տարբեր տվյալներ: (տես նկ. 3):

նկ. 3

Շտեմարանները կառուցվում են հետևյալ սկզբունքներով.

1. Նախ նկարագրվում է տվյալ գիրքը կամ պարբերականը Marc նկարագրության չափորոշիչներին համապատասխան: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի կամ պարբերականի ստեղծման, վայրի, տարեթվի, ստեղծողի,

պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոյուրացնեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները: (տես նկ. 4 և նկ. 5)



նկ. 4


Հայ գրքի մատենագիտական նկարագրության օրինակ



նկ. 5

Հայ մամուլի մատենագիտական նկարագրության օրինակ

2. Մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը կցվում է թվային տարբերակը՝ գիրքը կամ պարբերականը առցանց ընթերցելու համար: Թվային տարբերակները ընթեռնելի են «Կարդալ առցանց» հղման ներքո: Երկու շտեմարաններում էլ թվային տարբերակները տեղադրվում են PDF ձևաչափով: (տես նկ. 6 և նկ. 7)




նկ. 6 Հայ գրքի թվային տարբերակի օրինակ

նկ.7 Հայ մամուլի թվային տարբերակի օրինակ

ԱՇԽԱՏԱՐ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	
1794									1	2	
1795	5	6	7	8	9	10	11	12	13	14	
1796	17	18									

«Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանում ստեղծվում են աղյուսակներ յուրաքանչյուր անուն պարբերականի համար: Նշվում է պարբերականը, տարեթիվը և յուրաքանչյուր համարը, որին էլ կցվում է պարբերականի PDF տարբերակը: Սա հեշտացնում է ընթերցողի որոնողական աշխատանքը:

Գրքի թվային տարբերակները ձեռք են բերվում մի քանի ճանապարհներով:



«Հեղինակավոր գրառումներ» շտեմարանը: «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններին զուգահեռ 2012 թվականից Հայաստանի ազգային գրադարանում սկսվեցին «Հեղինակավոր գրառումներ» (Authorities) տեղեկատու շտեմարանի ստեղծման և ձևավորման աշխատանքները³: «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների Authority search հրամանի վրա սեղմելով՝ կարելի է մուտք գործել «Հեղինակավոր գրառումներ» շտեմարան (տես նկ. 8):

The screenshot shows the 'Authority search' section of a web application. At the top, there is a search bar with 'Library catalog' selected and a 'Go' button. To the right are 'Cart' and 'Lists' buttons. Below the search bar, there are links for 'Advanced search', 'Authority search', and 'Tag cloud'. The 'Authority search' section itself has a 'Search:' dropdown set to 'Default', a 'contains' dropdown, an input field, and an 'in keyword' dropdown. Below this is an 'Order by:' dropdown set to 'Heading ascendant'.

նկ. 8

Շտեմարանի ձևավորման նպատակը մեկն է՝ ստեղծել այնպիսի խորագիր, որին կմիանան դրան առնչվող մնացած բոլոր տարբերակները՝

³ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://haygirk.nla.am/cgi-bin/koha/opac-authorities-home.pl>

համապատասխան գրառումների կցումով: Այն պարբերաբար համալարվող և թարմացվող շտեմարան է, որը ձևավորվում է Marc ձևաչափով:

Շտեմարան ներառված գրառումների նկարագրության կառուցվածքը հետևյալն է.

1. Ստեղծվում է մեկ մուտքի կետ, որը տվյալ գրառման ամենատարածված, ընդունված տարբերակն է և որը մատչելի կդարձնի տվյալ գրառման բոլոր տարբերակները

2. Հաջորդում են տվյալ գրառմանն առնչվող բոլոր տարբերակները:

3. Կցվում են հեղինակավոր գրառմանն առնչվող գրքերի կամ պարբերականների գրառումները:

Անձնանունների և թեմատիկ խորագրերի ստեղծման պարագայում կան որոշակի տարբերություններ: Հեղինակային գրառումը ստեղծելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

1. Հեղինակի տարածված և ընդունված անվան տարբերակը:

2. Հեղինակի ստորագրությունը՝ որպես առանձին տարբերակ:

3. Կեղծանունները:

4. Հեղինակի անվան բոլոր փոփոխված տարբերակները:

5. Հեղինակային նկարագրման՝ տվյալ երկրում ընդունված օրենքները:

6. Հեղինակած կամ տվյալ հեղինակի հետ առնչվող տպագիր բոլոր նյութերը:

Նույնը վերաբերում է նաև կազմակերպությունների և հաստատությունների անուններին, տեղանուններին, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել (տես նկ. 9):

Թումանյան, Հովհաննես Թադևոսի, 1869-1923
used for/see from: Թումանյան, Հովհաննես Տեր-Թադևոսի, 1869-1923
used for/see from: Թումանյան, Հովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Հովհ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Հ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Յովհ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Յ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Հովհաննես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Հ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Հովհ. 1869-1923
used for/see from: Թումանյան, Օվանես Թադևոսովի, 1869-1923
used for/see from: Թումանյան, Օվանես, 1869-1923
used for/see from: Թումանյան, Օվ. 1869-1923
used for/see from: Tumanian, Hovhannes Tadevosi, 1869-1923
used for/see from: Tumanian, Hovhannes, 1869-1923
used for/see from: Tumanian, Hovhannes Tadevosi, 1869-1923
used for/see from: Tumanian, Hovhannes, 1869-1923
used for/see from: Tumanian, Ovanes, 1869-1923
used for/see from: Tumanian, Hovhannes, 1869-1923
used for/see from: Tumanian, Johannes, 1869-1923
see also: Թումանյանի տուն-թանգարան, Երևան
see also: Թումանյանի տուն-թանգարան, Գ. Դանդ
see also: Թումանյանի անվ. տիկնիկային թատրոն, Երևան
see also: Հ. Թումանյանի անվ. մրցանակ

Երևանի պետական համալսարան
used for/see from: Դեռանկան համալսարան
used for/see from: Հայաստանի պետական համալսարան
used for/see from: Երևանի համալսարան
used for/see from: ՂԱՀԱ պետական համալսարան
used for/see from: Երևանի ժողովրդական համալսարան
used for/see from: Երևանի Մոլոտովի անվան համալսարան
used for/see from: Երևանի պետական համալսարան Վ.Ս. Մոլոտովի անվան
used for/see from: ԵՀՀ
used for/see from: Երևանի ժողովրդական համալսարան
used for/see from: Ереванский государственный университет
used for/see from: Erevani Petakan Hamalsaran
used for/see from: Erevani Pethamalsaran
used for/see from: Erevanskiai gosudarstvennyi universitet
used for/see from: Armenian S.S.R. Petakan Hamalsaran
used for/see from: Erevan State University
used for/see from: Armenian S.S.R. State University
used for/see from: Yerevan State University
used for/see from: YSU
used for/see from: Staatliche Universität Jerewan
used for/see from: Université d'Etat d'Erevan
used for/see from: Università Statale di Erevan
used for/see from: Armenian S.S.R. Erevan State University
used for/see from: Staatliche Universität Jerewan
used for/see from: Erevani Hamalsaran
used for/see from: Armenian S.S.R. Erevani Petakan Hamalsaran
used for/see from: Erevani Petakan Hamalsaran
used for/see from: EGU
used for/see from: Universitet Państwowy w Erewaniu
used for/see from: Kratkon Państwamion tou Erevan
see also: Hayastani Petakan Hamalsaran

նկ.9

Greenstone ծրագրով ստեղծվող շտեմարանները:

Greenstone ծրագրով Հայաստանի ազգային գրադարանում ստեղծված տեղեկատու կամ տեքստային շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համա-

կարգ: Նյութը որոնելի է՝ ըստ հեղինակի, վերնագրի, պարբերականի, խորագրի, տարեթվի, նյութի տեսակի, լեզվի:

Շտեմարանները կառուցվում են հետևյալ ձևով.

1. HTML-ի համապատասխան դաշտերում մուտքագրվում են մատենագիտական տվյալները:


2. Տեղադրվում է տվյալ պարբերականի կայքը կամ նյութի pdf տարբերակը՝ նյութն ընթեռնելի դարձնելու համար

1. Greenstone ծրագրի մեջ լրացվում են համապատասխան դաշտերը:

2. Նյութը արխիվացվում է և հասանելի դառնում համացանցում:

Greenstone ծրագրով Հայաստանի ազգային գրադարանում ստեղծվել են կամ ընթացքի մեջ են հետևյալ շտեմարանները.

«Մամուլի հոդվածներ» շտեմարան⁴



Շտեմարանը Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող ժամանակակից պարբերական մամուլի հոդվածների մատենագիտական տեղեկատվական քարտարան է: Ձևավորման աշխատանքները սկսվել են 2013 թվականից:

Նպատակն է՝ մեկ ամբողջական դաշտում ներկայացնել ընթացիկ պարբերականների հոդվածների մատենագիտական նկարագրությունները: Մինչև 2013 թ. Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գրադարանագիտության բաժնում մատենագիտական նկարագրությունները կատարվում էին քարտային ձևաչափով և տեղադրվում քարտարանների համապատասխան բաժնում: 2013 թվականից մատենագիտական նկարագրությունը կատարվում է նույն ձևաչափով, սակայն էլեկտրոնային տարբերակով: Ներառված նյութը կադապարված է հեղինակային իրավունքի սահմանափակումներով, որի պատճառով տեղադրվում է ոչ թե այդ նյութի թվային տարբերակը, այլ տվյալ պարբերականի կայքը՝ այն ընթեռնելի դարձնելու նպատակով:

⁴ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsdl/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=nlagrad-normamul&l=en&w=utf-8>

արվել արտացոլել 400, այնուհետև 500-ամյա պատմություն ունեցող հայկական տպագրությունը: Ներառված են հորեյանական տարվա շրջանակներում հրատարակված նյութերի (գրքեր, ժողովածուներ, հոդվածներ) մատենագիտական նկարագրությունները: Նյութը որոնելի է ըստ հեղինակի, վերնագրի, տարեթվի, աղբյուրի, նյութի տեսակի:

«Հայ գիրքը 1512-1800 թթ.», «Հայ գիրքը 1801-1851 թթ.», «Հայ գիրքը 1851-1900 թթ.», «Հայ գիրքը 1901-1920 թթ.», «Անթվակիրներ», «Եզակի հրատարակություններ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (մինչև 1800 թ.)»: Շտեմարաններում ըստ ժամանակագրական հաջորդականության ներառված են հայ տպագիր գրքերի մատենագիտական նկարագրություններն՝ իրենց թվային տարբերակներով: Այս շտեմարանները բովանդակությամբ սերտորեն առնչվում են Koha ծրագրով ստեղծված «Հայ գիրք» շտեմարանին: Շտեմարանների ձևավորման հիմքում ընկած են համապատասխան վերնագրերով հրատարակված հայ տպագիր գրքի մատենագիտությունները: Նյութը որոնելի է՝ ըստ հեղինակի, վերնագրի, տարեթվի, տպարանի և հրատարակչի:

«Հայոց ցեղասպանությունը օտարալեզու մամուլում»⁷:

Շտեմարանի ձևավորման աշխատանքներն ընթացել են 2014-2016 թթ.:

Շտեմարանում ներառված են 1894-1896 թթ. համիդյան ջարդերի մասին օտարերկրյա մամուլի էջերում



տպագրված հոդվածները, տեղեկատվական նյութերը՝ տպագրված 1894-1895 թթ. ամերիկյան առաջատար New-York Evening Post, New-York Sun, New-York Herald, New-York Times, New-York Daily News, New-York World և այլ պարբերականներում: Այդ հրապարակումների կտրածոներով բնիկ էվերեկցի ծնողների զավակ Արամայիս Վարդուկյանը կազմել է երկու հավաքածու: Նրա քույր Հայկանուշը 1925 թ. հավաքածուները պահ է տվել նյույորքաբնակ Հովհաննես և Սաթենիկ Թարխանյան ամուսիններին, ովքեր 1966 թ. դրանք հանձնել են Սովետական Հայաստանի կառավարությանը: Այդ ժողովածուն՝ Ազգային բյուրոյի սեփականությունը, հանձնվել է Հայաստանի ազգային գրադարանին: Շտեմարանում ներառված բոլոր մատենագիտական

⁷ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsd/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=GENOCIDE100&l=en&w=utf-8>

նկարագրություններին կցված են թվային համարժեք տարբերակները: Նյութի որոնման համակարգը նույնն է, ինչ նշված շտեմարաններում էր:

«Հայերի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին»⁸:



Շտեմարանի ձևավորման աշխատանքները սկսվել են 2015 թ. և շարունակվում են առ այսօր: Այն ներառում է թեմայի վերաբերյալ 1941-2015թթ. ընթացքում տպա-

գրված գրքերի, հոդվածների, լուսանկարների և պլակատների մատենագիտական նկարագրություններ: Ծրագիրը հնարավորություն է տալիս հղում կատարել այն աղբյուրների էլեկտրոնային կայքերին, որոնք նշված են այդ նկարագրություններում:

«Արցախյան շարժում»⁹:

Շտեմարանի ստեղծման աշխատանքները սկսվել են 2015 թ. սեպտեմբերից: Այն ներկայացնում է 1988-ից առ այսօր թեմայի շուրջ հրատարակված նյութերը: Ընդգրկվում են թեմայի վերաբերյալ բոլոր հոդվածներն անխտիր՝ առանց զտման կամ կողմնապահության և ներկայացվում են ըստ թեմատիկ բաժանումների:



«Աստվածաշունչ»¹⁰:



Շտեմարանի ձևավորման աշխատանքները սկսվել են 2017 թ.: Ներառում է մինչ օրս մեզ հայտնի հայերեն տպագիր Աստվածաշունչ մատյանների մատենագիտական նկարագրությունները, որոնց

⁸ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsdl/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=nlagrad-haxtanak&l=en&w=utf-8>

⁹ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsdl/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=nlagrad-arcaxyan&l=en&w=utf-8>

¹⁰ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsdl/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=nlagrad-astvatsa&l=hy&w=utf-8>

կցված են համապատասխան թվային պատճենները: Շտեմարանում չեն ներառված Աստվածաշնչի առանձին գրքերի, Աստվածաշնչի պարականոն գրքերի, մանկական Աստվածաշնչի, աստվածաշնչական համառոտապատումների և դրանց վերաշարադրանքի հրատարակությունները:

«Տպարաններ»¹¹:

Շտեմարանի ձևավորման աշխատանքները սկսվել են 2013 թվականից և շարունակվում են առ այսօր: Ընդգրկում է Հայաստանում և աշխարհի տարբեր վայրերում գործունեություն ծավալած այն տպարանների ու



հրատարակչությունների վերաբերյալ տեղեկություններ, որոնք տպագրել են հայերեն գրքեր և ամսագրեր: Էլեկտրոնային շտեմարանում ներառվում է նաև տեղեկատվություն ժամանակակից հրատարակչությունների վերաբերյալ: Տպագրավայրերի անունները բերված են նոր՝ ժամանակակից ուղղագրությամբ:

Հայաստանի ազգային գրադարանի շտեմարանների կիրառելիության սահմանները ճշտելու համար կատարվել է վիճակագրական վերլուծություն հարցման հիմքի վրա: Հետազոտությունը կատարվել է 2018 թ. ընդգրկելով գրադարանավարների, ընթերցողների լայն շրջանակ՝ SurveyMonkey կայքի միջոցով: Մասնակցել է 100 մարդ՝ 50 ընթերցող, 50 գրադարանավար հարաբերակցությամբ: Ընդգրկվել են Հայաստանի ազգային գրադարանի բոլոր ընթերցասրահները: Հարցաթերթիկը լրացվել է առցանց, էլեկտրոնային հասցեն տպագիր տարբերակով բաժանվել է բոլոր ընթերցասրահներին:


Նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Հետազոտել Հայաստանի ազգային գրադարանի ընթերցողների սոցիալ-դեմոգրաֆիական կազմը:
- Բացահայտել թվային գրադարանից օգտվելու հաճախականությունը:
- Առանձնացնել առաջարկվող տեղեկատվության հուսալիությունը և թվային արտադրանքի հասանելիությունը:
- Առանձնացնել առաջարկվող տեղեկատվության հուսալիությունը և թվային արտադրանքի հասանելիությունը:

Հարցաթերթիկը բաղկացած էր տասը կետից: Ներկայացնենք դրանք համապատասխան արդյունքներով:


¹¹ Շտեմարանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://greenstone.flib.sci.am/gsd/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=publish&l=en&w=utf-8>

Հարցվածների բաշխվածությունն ըստ տարիքի՝




Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցումն անցկացվել է առցանց, իսկ հարցման հղումը տարածվել է թղթային տարբերակով՝ պարզ է դառնում, որ առավել շատ հետաքրքրություն ցուցաբերել են 26-35 տարեկան ընթերցողները, իսկ 60-ից բարձր տարիքի ընթերցողներն ու գրադարանավարները ավելի քիչ են արձագանքել: Կարծում ենք, որ հարցումը թղթային տարբերակով անցկացնելու դեպքում պատկերը մի փոքր այլ կլիներ:

Հարցվածների բաշխվածությունն ըստ սեռի՝




Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ առավել ակտիվ են իգական սեռի ներկայացուցիչները:


Հարցվածների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի՝



Այն հարցին, թե ծանոթ են ՀԱԳ էլեկտրոնային շտեմարաններին, ստացել ենք հետևյալ պատասխանները՝



Այն հարցին, թե ինչպես են տեղեկացել ՀԱԳ շտեմարանների մասին, ստացել ենք հետևյալ պատկերը.




Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ տեղեկատվության հիմնական աղբյուրը բանավոր հաղորդակցությունն է և գրադարանավարների նպատակասլաց աշխատանքը: Յուրաքանչյուր ընթերցողին ուղղորդելով դեպի ՀԱԳ շտեմարանները՝ գրադարանավարները հետաքրքրություն են սերմանում և հնարավորություն ստեղծում ընթերցողի համար՝ հետագայում ուսումնասիրել նաև մյուս շտեմարանները: Մինչդեռ սոցիալական ցանցերը, գովազդ ու միջոցառումները, որոնք, ըստ էության, պետք է լինեին տեղեկատվության տարածման հիմնական աղբյուր, առավել պասիվ են: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ գրադարանը պետք է հետևողական լինի տեղեկատվության այս աղբյուրներով շտեմարաններն ավելի հասանելի դարձնելու հարցում:

ՀԱԳ ո՞ր շտեմարանից եք առավել հաճախ օգտվում:

Մեր հարցմանը մասնակիցներից 43%-ը առավել հաճախ օգտվում է «Հայ գիրք» շտեմարանից, 21%-ը՝ «Մամուլի հոդվածներ» շտեմարանից, 13%-ը՝ «Հայ մամուլ» շտեմարանից, 14%-ը՝ բոլորից, 7%-ը՝ «Արև» օրաթերթ շտեմարանից և 2%-ը՝ այլ շտեմարաններից (Այլ-ի մեջ ներառված են ՀԱԳ էլեկտրոնային կայքում տեղադրված բոլոր այն շտեմարանները, որոնք հիշատակված չեն այս ցանկում):

Բավարարում է արդյոք շտեմարանների թեմատիկ ուղղվածությունը:
Այս հարցին հարցման մասնակիցները տվել են հետևյալ պատասխանները.




Հարցման մասնակիցներից 73%-ին բավարարում է ՀԱԳ էլեկտրոնային շտեմարանների թեմատիկ ուղղվածությունը, 24%-ին՝ ոչ, 3%-ին՝ մասամբ:

Ինչու՞ եք նախընտրում օգտվել ՀԱԳ էլեկտրոնային շտեմարաններից:
Այս հարցին ստացվել են հետևյալ պատասխանները.

- Որոնողական դյուրին համակարգ 51%
- Թեմատիկ ուղղվածություն 11%
- Հասանելիություն 16%
- Ժամանակի խնայողություն 22%

Իսկ հաջորդ հարցին, թե ճկուն է արդյոք ՀԱԳ էլեկտրոնային շտեմարանների որոնողական համակարգը, տրվել են հետևյալ պատասխանները. այո՝ 62%, մասամբ՝ 32%, ոչ՝ 6%:



Առանձնակի հետաքրքիր էր վերլուծել հարցախույզի 10-րդ կետը՝ Առաջարկներ բաժինը: Ընթերցողների մի մասն առաջարկում է ավելի բարելավել տեխնիկական ապահովվածությունը՝ շտեմարանների մշտական հասանելիությունն ապահովելու համար: Տեխնիկական տարբեր պատճառներով երբեմն շտեմարանները դառնում են անհասանելի: Այս նկատառմանը կարող ենք հակադարձել՝ նշելով, որ Հայաստանի ազգային գրադարանն անում է ամեն ինչ՝ շտեմարանների տեխնիկական ապահովվածությունը կատարյալ դարձնելու համար: Ընթերցողներն առաջարկում են.

- ավելացնել թեմատիկ շտեմարանների քանակը,
- ընդլայնել խորագրերը,
- ավելի ճկուն դարձնել որոնողական համակարգը,
- ստեղծել այլալեզու գրքերի առանձին շտեմարան՝ թվային տարբերակի պարտադիր բաղադրիչով,
- ավելի շատ ուշադրություն դարձնել շտեմարանների խմբագրական աշխատանքներին,
- ստեղծել գրադարանային մարքեթինգով զբաղվող մի խումբ, որը պարբերաբար կկատարի վերլուծություններ, ինչն էլ կնպաստի շտեմարանների նպատակային ստեղծմանը:

Հարցման մասնակիցների գերակշիռ մասը պարզապես շնորհակալություն էր հայտնել կատարված աշխատանքի համար:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ էլեկտրոնային այս շտեմարանները պարունակում են մատենագիտական հարուստ նյութ, որը բանասիրական ճշգրտումների, մատենագիտական պրպտումների ամենօրյա և քրտնաջան աշխատանքի արդյունքն է: ՀԱԳ էլեկտրոնային շտեմարանները ավելի ու ավելի պահանջված են դառնում ընթերցողների շրջանում, ինչն էլ հիմք է հանդիսանում շտեմարանների շարունակական ընդլայնման և կատարելագործման համար:

SUMMARY


Electronic databases of the National Library of Armenia contains a rich bibliographic material that is a result of daily and hard work of philanthropic corrections, bibliographic exploration. Databases are becoming more and more demanding for readers, which is the basis for continual expansion and upgrading of repositories. of the National Library of Armenia contains a rich bibliographic material that is a result of daily and hard work of philanthropic corrections, bibliographic exploration. Databases are becoming more and more demanding for readers, which is the basis for continual expansion and upgrading of repositories.

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

(1 տարի անց)

Բանալի բառեր՝ Թանգարան, տպագրության պատմություն, թանգարանային միջոցառումներ, ուսումնական ծրագրեր:

Keywords. Museum, history of printing, museum events, educational programs.



Հայաստանի ազգային գրադարանի կառույցում գործող Գրատպության թանգարանը մեկամյա պատմություն ունի: Բացառիկ այս մշակութային օջախը այցելուների առջև պաշտոնապես իր դռները բացեց 2017 թ. սեպտեմբերի 25-ին՝ նպատակ ունենալով այցելուներին ներկայացնել գրատպության անցած ուղին ու դրա զարգացումը:

Թանգարանի տարբեր սրահներում փուլ առ փուլ ներկայացված է հայ-

կական գրատպության զարգացման ուղին՝ սկսած առաջին տպագիր գրքից, պարբերականից, քարտեզից, մինչև մեր ժամանակները¹: Այն հայկական տպագրության պատմությունն ամփոփող մի անկյուն է՝ ինքնատիպ ոճով, ցուցանմուշների հարուստ հավաքածուով:


Մեկ տարվա գործունեության ընթացքում Գրատպության թանգարանը ունեցել է հետաքրքիր ձեռքբերումներ: Այս կարճ ժամանակահատվածում այն դարձել է Եվրոպական Գրատպության թանգարանների ասոցիացիայի անդամ²: Թանգարանի մասին նյութը և լուսանկարները տեղադրված են European Printing Museum-ի էջում, flickr.com կայքում՝ AEPM's Flickr gallery³, ինչպես նաև Type and press-ում⁴:

¹ Թանգարանի կառուցվածքի, նպատակի, գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Հարությունյան Բ., Գրատպության թանգարան, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2017, թ. 2, էջ 102-105 http://bal.asj-qa.am/59/1/5-10. BALASAN_HARUTYUNYAN.pdf

² <http://www.aepm.eu/member/printing-museum-armenia/>

³ <https://www.flickr.com/photos/printing-museums/albums>

⁴ <http://typeand.press/new-blog/2017/10/20/the-museum-of-printing-in-yerevan>



Բացման օրվանից առ այսօր թանգարան են այցելել ուսանողներ, աշակերտներ, արվեստի, մշակույթի, գիտության տարբեր բնագավառներում հայտնի անհատներ: Բոլոր կարծիքները հանգում են նույն ելակետին՝ Գրատպության թանգարանը պահանջված էր հասարակության տարբեր շերտերի կողմից: Այս փաստն ինքնին խոսում է թանգարանի ստեղծման կարևորության մասին:

Թանգարանում հյուրընկալվել են բազմաթիվ պատվիրակություններ. առանձնացնենք մի քանիսը՝

- Ռուսաստանի արվեստի գրադարանի պատվիրակությունը:
- Ռուսաստանի ազգային գրադարանի պատվիրակությունը:
- Ուզբեկստանի ազգային գրադարանի պատվիրակությունը:
- Ղազախստանի Նազարբաևի անվան համալսարանի գրադարանի պատվիրակությունը:
- Ֆրանսիայի Լիոնի քաղաքային գրադարանի պատվիրակությունը:
- Բելգիայի թագավորական ակադեմիայի արվեստների մասնաճյուղի պատվիրակությունը:
- Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակում Ֆրանսիայից Հայաստան ժամանած Ֆրանսիացի գրողների պատվիրակությունը:
- Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պատվիրակությունը:

Թանգարանը հյուրեր է ունեցել Ավստրալիայից, Հունաստանից, Հնդկաստանից, Ղրղզստանից, Իտալիայից, Իսպանիայից, Լիբանանից, Բելառուսից, Անգլիայից, Շվեյցարիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից, Լեհաստանի և Հունաստանի հայ համայնքներից և այլն: ՀՀ Սփյուռքի նախարարության Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի շրջանակներում (2018 թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 11-ը՝

4 փուլերով) 173 մասնակից Հունգարիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Մակեդոնիայից, Բելգիայից, ԱՄՆ, Չեխիայից, Սլովակիայից, Ռուսաստանից, Իրաքից, Հունաստանից, Լիբանանից, Ուկրաինայից այցելել է թանգարան:

Հարկ ենք համարում նշել, որ Գրատպության թանգարանի թիրախային խումբը դպրոցականներն ու ուսանողներն են: Հենց այս լսարանի հետ հաղորդակցվելու համար թանգարանում մշակվում են նոր կրթական ծրագրեր ու մեթոդներ՝ նյութն ավելի մատչելի ու հասանելի դարձնելու համար: Խաղ-շրջայցի, դասախոսության, կրթական ծրագրերի միջոցով թանգարանը ստեղծում է այցելուների հետ բազմաշերտ փոխհարաբերությունների հարթակ, ինչն էլ հնարավորություն է ընձեռում ներգրավել այլ մասնակիցների: Կրթական ծրագրերի ներդրման արդյունքում թանգարանը նորովի է ընկալվում որպես կրթական տարածք: Ներկա փուլում թանգարանում իրականացվում է 6 կրթական ծրագիր՝ տարբեր տարիքային խմբերի համար՝

- «Մադրասի հայրենասիրական խմբակը. Որոգայթ Փառացը»
- «Բացահայտում»
- «Հայ գրատպության առաջնեկները»
- «Գրատպության քառուղիներում»
- «Տպագիր գրքի պատմությունը»
- «Իմ առաջին այբբենարանը»

Թանգարան-այցելու կապն ամրապնդելու, հասարակության ուշադրությունը գրավելու, թանգարանը հանրահռչակելու համար կարևոր հարթակ են միջոցառումները, որոնցից առանձնացնենք՝

- Թանգարանների միջազգային օրվա և Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում պատրաստված և ցուցադրված «Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրները» թեմայով տեսանյութը (2018 թ. մայիսի 18-19),
- Շիրակի երկրագիտական թանգարանի հիմնանորոգմանն աջակցելու նպատակով կազմակերպված ցուցադրություն «Հայկական մամուլը Ֆրանկոֆոն երկրներում» թեմայով (2018 թ. սեպտեմբերի 3),
- Մշակութային ժառանգության Եվրոպական տարի, «Կիսվելու արվեստը» խորագրով (2018 թ. սեպտեմբերի 22-23),
- Անկախության 27-ամյակին և Գրատպության թանգարանի առաջին տարեդարձի առթիվ (2018 թ. սեպտեմբերի 26),
- Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում՝ «Գրքի անցած ուղին» ֆիլմի դիտում (2018 թ. հոկտեմբերի 7),
- «Հեքիաթի անհայտ էջերից» թեմայով բաց-դաս:

Միջոցառումներից առանձնացնենք հատկապես «Եվրոպական ժառանգության օրերը», ինչը հնարավորություն տվեց մի անգամ ևս արժևորելու գրավոր ժառան-

գության ակունքներն ու հայ գրատպության սփյուռքը: Կազմակերպվեցին հետևյալ միջոցառումները.

- «Եվրոպական Գրատպության թանգարանները» ֆիլմի ցուցադրություն,
- «Եվրոպացի հայագետները հայերենի ծագման շուրջ» թեմայով դասախոսություն:

Իսկ 2018 թ. նոյեմբերի 12-14, ՀԲԸՄ Հայաստանի ցուցասրահում կազմակերպված «Թանգարանային շաբաթ. վերանայելով մշակութային տարածքները» խորագրով միջոցառումների շրջանակներում անցկացվող MUSExpo2018-ին Գրատպության թանգարանը ներկայացավ իր առանձին անկյունով և իր հարուստ ցուցանմուշներով:

Թանգարանի գործունեության առանցքում կարևոր է նաև «Հուշանվերների անկյունը», որը սովորական առևտրային կետ չէ: Այն թանգարանի բաղկացուցիչ մասն է և համապատասխանում է թանգարանի ոճին և առաքելությանը: Այն պետք է դիտել որպես հասարակայնության հետ կապերի միջոց: Այցելուն այստեղից կարող է ձեռք բերել այն, ինչ չի կարող գտնել այլ վայրերում: Թանգարանից մեծ տպավորություն ստացած այցելուն ձեռք է բերում թանգարանի խորհրդանիշ կամ լոգոտիպ պարունակող որևէ հուշանվեր: Այս հուշանվերը ծառայում է նաև որպես թանգարանի գովազդ: Այստեղ հաշվի են առնվում բոլորի տարիքային և սոցիալական խմբերի հետաքրքրություններն ու հնարավորությունները:



Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի դիմապատկերով հուշանվեր-կրծքանշան (բրոնզ, 30 մմ.):
Հեղինակ՝ Գուրգեն Հակոբյան

Հուշամեդալ (բրոնզ, 40-40 մմ.)
Հեղինակ՝ Գուրգեն Հակոբյան



Նորոթյա ընդօրինակումներ՝
հայերեն առաջին տպագիր քարտեզ
(«Համատարած աշխարհացույց»),
Ամստերդամ, 1695 թ.:

Հեղինակ՝ Կարեն Խաչատրյան



Քարտեզի դետալներով փոստային
բացիկներ:
Հեղինակ՝ Կարեն Խաչատրյան



Առանձին ներկայացնենք նաև այցելուների շրջանում առավել շատ
հետաքրքրություն վայելած ցուցանմուշները.



Փայտափորագիր տախտակ


Երևանը՝ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու և հայ գրատպության 500-ամյա հոբելյանի առթիվ տիեզերք ուղարկված և երկիր վերադարձված հայկական այբուբեն



Հոլոգրաֆիկ սարք



Առաջին տպագիր քարտեզը



Տպագրիչ (մուլյաժ)

Տպագրական մեքենաներ



Թանգարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ տպավորություն ստացավ, ի՞նչ է ակնկալում այցելուն. նմանատիպ այլ հարցեր՝ գրավոր հարցաթերթիկների տեսքով, որպեսզի բոլոր հնարավոր միջոցները ներդրվի այցելուի պահանջները բավարարելու համար: Վերջինիս պահանջների ուսումնասիրությունն ու համապատասխան եզրակացությունները կարևոր են յուրաքանչյուր թանգարանի համար:

SUMMARY

The Museum of Printing introduces the evolution of book creation across the centuries: from manuscripts to printed books. Exhibits are displayed in six halls. Some exhibits are being displayed with the use of computer technologies. These creates an interactive environment for informal education. The museum is serving as an educational hub for high school and University students.

ՆՈՐԱՀԱՅՏ ԳՐՔԵՐ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

(ՀԱԳ հրատարակություններ)



2018 թ. տարեվերջին Հայաստանի ազգային գրադարանը ընթերցողի սեղանին դրեց «Նորահայտ գրքեր և պարբերականներ» գրքի Ա. պրակը¹: Այն իր տեսակի մեջ եզակի է և նախադեպը չունեցող: Կազմված է հինգ բաժնից:

1. Գրքեր /ներառված են մինչև 1930 թ. հրատարակություններ/:
2. Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր / ներառված են մինչև 1850 թ. հրատարակություններ/:
3. Պարբերականներ / ներառված են մինչև 1970 թ. հրատարակություններ/:
4. Հայկական հետք:
5. Հավելված:

Յուրաքանչյուր բաժնի ներսում նյութերի մատենագիտական նկարագրությունները դասավորված են ըստ տպագրության տարեթվերի՝ աճման կարգով: Գրքերն ու պարբերականները նկարագրված են մատենագիտական արդի պահանջներին համապատասխան՝ հապավումների, վերնագրերի և օգտագործված գրականության օժանդակ ցանկերով: Նկարագրված բոլոր գրքերի ու պարբերականների թվային տարբերակները հասանելի են «Հայ գիրք»², «Հայկական շարունակական հրատարակություններ»³ շտեմարաններից:

Մինչ այժմ կազմված հայ գրքի և հայ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերի հիմնական նպատակը եղել է առավել ամբողջական ներկայացնել հայ

¹ Նորահայտ գրքեր և պարբերականների: Պրակ Ա /Կազմ.՝ Ստ. Պետոյան, Ռ. Ալեքսանյան; Խմբ.՝ Տ. Զարգարյան, Հ. Ղազարյան, Մ. Գրիգորյան; Առաջաբ.՝ Տ. Զարգարյան; Հայաստանի ազգային գրադարան.- Եր.: «Գիրք» հրատ., 2018.- 128 էջ, նկար, քարտեզ, շարվ.՝ 16,5X21,5 սմ:

² <http://haygirk.nla.am/>

³ <http://tert.nla.am/>

տպագրության համապատասխան շրջանի պատկերը: Չնայած կատարված մանրակրկիտ աշխատանքին՝ մատենագիտական համահավաք ցանկերից տարբեր պատճառներով դուրս են մնացել հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքեր ու պարբերականների, որոնք էլ կազմել են ներկա հրատարակության բովանդակությունը: Եթե տվյալ գիրքը առկա է Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում, ապա նշվել է, թե որ թվականին է այն մուտք գործել գրադարան: Եթե առկա չէ, ապա նշվել է, թե որ գրադարանում այն կա: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրքերն ու պարբերականները համահավաք ցանկերում չեն ներառվել հիմնականում ֆիզիկական բացակայության պատճառով. դրանք գրադարան մուտք են գործել մատենագիտական համապատասխան հատորի տպագրությունից հետո: Որոշ անուններ գտնվել են էլեկտրոնային աճուրդներից, որոշ նյութեր նվիրել են գրադարանի բարեկամները՝ անհատներ և գործընկեր գրադարաններ: ՍտՔԳ նշումով բոլոր գրքերը հայտնաբերել են ՀԱԳ աշխատակիցներ Աստղիկ Վարդանյանն ու Անի Սարգսյանը 2017 թ. Ստամբուլի քաղաքային գրադարանի հայերեն գրքի հավաքածուի հետ աշխատելիս, իսկ ՍՊԱԳ նշումով բոլոր գրքերի թվային տարբերակները Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրել Եգիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ, հասարակական գործիչ Սուրեն Պայրամեանը: Մի շարք գրքեր ու պարբերականներ եղել են կազմակից և վրիպել են մատենագետների ուշադրությունից: Որոշ գրքեր հայտնաբերվել են տարբեր թվային գրադարանների տրամադրած պաշարներից:

Սույն հրատարակության մեջ առանձնակի ուշադրության է արժանի «Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր» բաժինը, ուր ներառված են մինչև 1850 թ. տպագրված և հայերեն կամ հայատառ հատվածներ պարունակող այլալեզու գրքերը: Նախկինում մատենագետները հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրել աշխարհի տարբեր գրադարանները, մինչդեռ այսօր բոլոր գրադարանները թվայնացրել են իրենց պաշարները, ինչն էլ հետազոտություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ աշխարհի տարբեր գրադարաններում պահպանվում են մինչև 1850 թ. տպագրված բազմաթիվ օտարալեզու գրքեր, որոնք պարունակում են հայերեն Տերունական աղոթքը, այբուբենը՝ լատինատառ տառադարձումով, հայերեն բառեր կամ նախադասություններ: Այդ գրքերի մատենագիտական նկարագրությունները ներառվեցին այս պրակի մեջ, իսկ թվային տարբերակները հասանելի են «Հայ գիրք» շտեմարանից:

«Հայադարան» բաժնում ներկայացված են Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների, տպագրության պատմության մասին տեղեկություններ պարունակող մի շարք օտարալեզու գրքեր, որոնք աղբյուրագիտական արժեք ունեն պատմաբանասիրական ուսումնասիրությունների համար:

Վերջին տասնամյակի ընթացքում կատարված մատենագիտական որոնումների արդյունքում բազմաթիվ հայերեն հնատիպ գրքեր են հայտնաբերվել աշխարհի տարբեր գրադարաններում: Այդ գրքերի մատենագիտական նկարագրությունները թեպետ ներառվել են «Հայ գիրքը 1512-1800 թթ.» (Երևան, 1988) ուսումնասիրության մեջ, սակայն մշակութային այդ հաստատությունների անունները չեն հիշատակվել որպես հայերեն հնատիպ գրքերի պահպանության օջախներ: Ուստի առանձին հավելվածի տեսքով ներկայացված են մի շարք այդպիսի գրադարաններ՝ հայերեն հնատիպ գրքերի համապատասխան ցանկերով:

Մատենագիտական որոնումների արդյունքում մեր կողմից հայտնաբերվել 1646 թ. տպագրված «Նոր Կտակարանի» տիտղոսաթերթը, 1793 թ. Նոր Զուղայում տպագրված մեկ հնատիպ գիրք, 83 անուն հայերեն և հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտական նկարագրություն, որոնցից 24 անունը՝ 1801-1850 թթ., 26 անունը՝ 1851-1900 թթ., 21 անունը՝ 1901-1920 թթ., 12 անունը՝ 1921-1930 թթ.: Ներառվել է նաև 14 անուն հայերեն հատված պարունակող գրքերի և 9 անուն պարբերականի մատենագիտական նկարագրություն:

Կատարված աշխատանքը ցույց է տալիս, որ հայ գրքի ու մամուլի տպագրության պատմության մեջ կան բազմաթիվ անհայտ կողմեր, որոնց ուսումնասիրությունը նոր մատենագիտական ցանկերի հիմք կարող է հանդիսանալ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ

*Հայաստանի ազգային գրադարան
Մատենագիտության և գրադարանագիտության բաժին*

ՀԱՅ ԳԻՐՔԸ 1931-1940 ԹԹ.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ՀԱԳ հրատարակություններ)



2018 թ. տարեվերջին Հայաստանի ազգային գրադարանը ընթերցողի սեղանին դրեց երկու հրատարակություն՝ «Հայ գիրքը 1931-1940 թթ.»¹ մատենագիտությունը:

Հայ գրքի համահավաք մատենագիտություն կազմելու գաղափարը ծագել է նախորդ դարի 50-ական թվականներից: Հայաստանի ազգային (նախկինում՝ հանրային) գրադարանի աշխատակիցների ամենօրյա որոնումների և ուսումնասիրությունների արդյունքում 1963 թ. տպագրվում է «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ 1512-1800» գիրքը, որին հաջորդում է Հ. Դավթյանի կազմած «Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտությունը (1967 թ.): Իսկ 1988 թ. Ն. Ոսկանյանի, Ք. Կորկոտյանի, Ա. Սավալյանի ջանքերով ընթերցողի սեղանին է

դրվում «Հայ գիրքը 1512-1800 թթ.» ընդգրկուն մատենագիտությունը, որն առ այսօր անփոխարինելի է այդ շրջանի հայ տպագրության պատմության ուսումնասիրության համար: Հետագա տասնամյակների ընթացքում լույս են տեսնում հայ գրքի հաջորդ համահավաք մատենագիտական ցանկերը՝ յուրաքանչյուր հատորում ընդգրկելով համապատասխան շրջանը՝ «Հայ գիրքը 1851-1900 թթ.» (հատոր Գ, Երևան, 1999 թ.), «Հայ գիրքը 1901-1920 թթ.» (հատոր Դ, Երևան, 2007 թ.), «Հայ գիրքը 1921-1930 թթ.» (հատոր Ե, Երևան, 2012 թ.): Ընթերցողի սեղանին է դրվում Հայ գրքի մատենագիտության հերթական Զ. հատորը՝ «Հայ գիրքը 1931-1940 թթ.» խորագրով: Այն լրացնում է նախորդ հինգ հատորների շարքը՝ ընդլայնելով հայ գրքի պատմության ուսումնասիրման ժամանակագրական սահմանները: Գիրքը ստեղծվել է որպես նախորդ հատորների տրամաբանական շարունակություն՝ կազմման սկզբունքներին և չափորոշիչներին համապատասխան: Ներառվել են 1931-1940 թթ. աշխարհի տար-

¹ Հայ գիրքը 1931-1940 թվականներին /Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան; Խմբ.՝ Մ. Գրիգորյան, Ա. Խաչատրյան, Վ. Սրկ. Սերովբյան; Առաջաբ.՝ Վ. Դևրիկյան.- Եր.: «Գիրք» հրատ., 2018.- XIV, 928 էջ, շարվ.՝ 25X16,5 սմ:

բեր ծայրերում տպագրված հայերեն, հայատառ թուրքերեն, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը՝ 9781 անուն: Այն Ազգային գրադարանի մատենադասերի հետևողական, պրպտուն աշխատանքի, ամենօրյա որոնումների և եզրահանգումների պտուղն է:

Հատորը կազմված է հայ գրքի՝ 1931-1940 թթ. ընդգրկող բուն մատենագիտությունից և օժանդակ ցանկերից: Բուն մատենագիտության մեջ գրքերի մատենագիտական նկարագրությունները դասավորված են ըստ տպագրության տարեթվերի՝ աճման կարգով, իսկ տարեթվերի ներքո՝ այբբենական դասավորությամբ:

Գրքերի հեղինակները, վերնագրերը, ենթավերնագրերը տրվում են այն ուղղագրությամբ, ինչպես գրված է տիտղոսաթերթին: Տպագրության վայրից սկսած մնացած տվյալները տրվում են արդի ուղղագրությամբ:

Օժանդակ ցանկերի կազմման սկզբունքները ներկայացված են յուրաքանչյուր ցանկի սկզբում: Մատենագիտության մեջ առկա են հետևյալ ցանկերը՝

1. Հապավումների ցանկ,
2. Անձնանունների ցանկ,
3. Վերնագրերի ցանկ,
4. Տպագրության վայրերի և տպարանների ցանկ,
5. Նյութերի առարկայական ցանկ,
6. Մատենաշարերի ցանկ,
7. Օգտագործված գրականության ցանկ:


Սույն մատենագիտությունը, համալրելով նախորդ հինգ հատորների շարքը, հնարավորություն է տալիս ուսումնասիրողին հստակ պատկերացնելու, թե որակական ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել հայկական տպագրությունը նշված տասնամյակում, թեմատիկ ո՞ր ուղղությունն է գերիշխող եղել, տպագրական ո՞ր օջախն է ավելի ակտիվ կամ պասիվ գործել նախորդ տասնամյակների համեմատ և այլն: Կարծում ենք՝ հայ գրքի ուսումնասիրման համար գիրքը հրաշալի ու անսպառ աղբյուր է, ինչպես նաև խթան՝ հաջորդ հատորի կազմման աշխատանքները սկսելու համար:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ

*Հայաստանի ազգային գրադարան
Մատենագիտության և գրադարանագիտության բաժին*

ՇԻՐՎԱՆՁԱԴԵ. ՀՈՒՇԱՊԱՏԿԵՐՆԵՐ

(ՀԱԳ հրատարակություններ)



2018 թ. Հայաստանի ազգային գրադարանը հրատարակել է «Շիրվանզադե. Հուշապատկերներ» գիրքը՝ նվիրված հայ գրող, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 160-ամյակին:

Գիրքը կազմել, ինչպես նաև ծանոթությունների հեղինակն է տնտեսական մշակութաբան, հրապարակախոս Խաչատուր Դադայանը, խմբագիրն է Տիգրան Զարգարյանը, տպագրվել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:

Այն Շիրվանզադեի հուշագրությունն է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի, գրողներ Սիամանթոյի, Րաֆֆու, Գամառ Քաթիպայի¹, Գաբրիել Սունդուկյանի, Պերճ Պողոսյանի, Ղազարոս Աղայանի, խմբագիրներ Գրիգոր Արծրունու, Աբգար

Հովհաննիսյանի, Ավետիք Սպանդարյանի, Ալեքսանդր Քալանթարի, Համբարձում Առաքելյանի, Սպանդար Սպանդարյանի, մշակութային գործիչ Կոնստանդին Խատիսյանի և դերասան Պետրոս Ադամյանի մասին: Զետեղված է նաև Վարդգես Ահարոնյանի հուշագրությունը Շիրվանզադեի մասին: Առանձին գրքով լույս է տեսնում առաջին անգամ:

Նոյեմբերի 22-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Շիրվանզադե Հուշապատկերներ» գրքի շնորհանդեսը: Գիրքը ներկայացրեց և կատարված աշխատանքների մասին խոսեց տնտեսական մշակութաբան Խաչատուր Դադայանը: Միջոցառմանը ներկա էին գրքի խմբագիր, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը, Ե.Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը, Կոմիտասի անվան ազգային լարային քառյակի տնօրեն Սամվել Մեսրոպյանը, Համահայկական գրող-

¹«Գամառ-Քաթիպա»-ն գրական ընկերություն էր, որը հիմնադրվել է 1854 թ. Մոսկվայում: Հիմնադիրներն են եղել Ռաֆայել Պատկանյանը, Մնացական Թիմուրյանը և Գևորգ Քանանյանը: Ընկերության անունը կազմված է նրանց անունների և ազգանունների սկզբնատառերից:

ների միության նախագահ Արգար Ափինյանը, ՀՀ գիտությունների ակադեմիայի առաջատար գիտաշխատող Սուրեն Սարգսյանը և գրադարանի աշխատակիցներ:

«Անթաքույց սեր ու հարգանք ուներ Շիրվանզադեն Պետրոս Ադամյանի հանդեպ: Նա նրան համարում է հանճարեղ դերասան: Դերասանների դժբախտությունն այն էր, որ այն ժամանակ տեխնիկայի բացակայությունը ստիպում էր նրանց խաղալ, իրենք իրենց տեսնել և ինքնուրույն գրախոսություններ գրել: Բայց, ցավոք, հետագա սերունդները այն տեսնելու, գրախոսություններին ծանոթանալու հնարավորություն չունեին».- իր խոսքում նշեց Խաչատուր Դադայանը՝ հավելելով, որ այս աշխատությունը միտում ունի, ինչու չէ նաև աշակերտների շրջանում Շիրվանզադեի գործերի այս ճյուղին ծանոթանալու հիմնական աղբյուր հանդիսանալ:

Հեղինակի խոսքով Շիրվանզադեն պատահական չի ընտրել այս խմբագիրներին, նրանք մեծ ներդրում են ունեցել ժամանակին հասարակական կարծիք ձևավորելու գործում: Ցավոք, հանգամանքների բերումով շատ այլ արժանավոր հեղինակներ, խմբագիրներ ու գործիչներ չեն արժանացել ուշադրության Շիրվանզադեի կողմից:

-Գրքի հրատարակումը հիանալի առիթ է ևս մեկ անգամ անդրադառնալու Շիրվանզադեի գրական գործի արդիականության նշանակությանը, քանի որ մեծ գրողը ասելիք ունի մեր ժամանակին: Շիրվանզադեի հուշերը շատ կարևոր են գրականության մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար: Ես շնորհակալ եմ Ազգային գրադարանին՝ հայ մեծ դասական գրող Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 160-ամյակը լավագույն կերպով նշելու համար,- իր խոսքում նշեց Համահայկական գրողների միության նախագահ Արգար Ափինյանը:

Գրքի լույսընծայման առիթով շնորհավորական խոսքեր ասացին նաև Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը և ՀՀ գիտությունների ակադեմիայի առաջատար գիտաշխատող Սուրեն Սարգսյանը: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ գրքի խմբագիր, ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

*Հայաստանի ազգային գրադարան
Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպմանը բաժին*